№ 6 (137) XIII ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍ 1903

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՍՊԱՌՆԱԼԻՑ ԴՐՈՒԹԻՒՆ

Յուլիսի 12-ին „Դրօշակ"ի խմբագրութիւնը ստացաւ Թիֆլիսից հետևեալ հեռագիրը, որը տպագրուեց Pro Armenia-ում և եւրոպական այլ թերթերի մէջ։

„Քրդերի բռնած սպառնալից դիրքի շնորհիւ, Սասունում ու Մշոյ դաշտում տիրում է մեծ անհանգստութիւն։ Ազգաբնակութիւնը կոչ է անում մարդկութեան ու եւրոպական պետութիւններին"։

Նոյն օրերին գրած մի նամակում մենք կարդում ենք այդ հեռագիրը պարզաբանող մի շարք մանրամասնութիւններ, որ ընթերցողը կը գտնէ ներքև, Մուշի նամակում։

Ակներև է, որ յունիսի սկզբներին Մուշ-Սասունի շրջանում դրութիւնը եղել է սպառնալից։ Ի՞նչ է կատարուել նրանից յետոյ՝ դեռ յայտնի չէ։ Եւրոպական թերթերում յուլիսի վերջերը լոյս տեսած մի հեռագիր հաղորդեց, թէ զօրքերը կանչուած են Մուշ՝ ժողովրդի „գաղթականութեան" առաջն առնելու համար, աւելացնելով, որ երեք գիւղի բնակիչներ արդէն թողել են իրենց տները և որ յիշեալ „գաղթականութիւնը" խրախուսւում է իբր թէ օտար „խռովարարների" կողմից։

Այս հեռագիրը, որ մի տեսակ պատասխան է վերևի լուրերին և, ի հարկէ, հաղորդուած է տաճկական աղբիւրից — աւելի ևս ճշդում է մեր ընկերների գրածը։ Քիւրդ պահապաններ նշանակելը հայ գիւղերում, զօրքեր տեղաւորելը հայկական նշանաւոր վայրերում, հայերին օրէնքից դուրս նկատելը ու մահմէտական տգէտ խուժանի գրգռումը անզէն հայ գիւղացիների դէմ — այս բոլորը բաւական չէր։ Հայերի ոչնչացման ծրագրին աւելի արագ ընթացք տալու համար՝ Համիդի կառավարութեանը հարկաւոր է հրդեհուող գիւղերի ծուխ, մարդկային արեան հոսանք...

Եօթը տարի է անցել 1895-96-ի ծանր օրերից, և հայ ժողովրդի գլխին նոր, սև ամպեր են հաւաքւում։ Ո՞ւր կը յանգի այս սպառնացող փոթորիկը, ի՞նչ չափով կ'իրականան մեր տխուր նախազգացումները — դժուար է ասել։ Մի բան, որ որոշակի կարող ենք պնդել, այն է, որ Տարօնում տեղի ունեցող դէպքերի լուծումը, ինչպէս և ամբողջ հայկական դատի այս կամ այն կողմ թեքուելը, կախուած կը լինի հայ ժողովրդի դիմադրական ուժից, նրա յեղափոխական պատրաստութիւնից։ Թուլութեան դէպքում հայերը կը թալանուեն, կը կոտորուեն և կը հեռանան հայրենական օջախից առանց ոևէ հետք թողնելու՝ հայ դատին նպաստելու տեսակէտից։ Հակառակ պարագայում՝ նրանք թանկ գնով կը ծախեն իրենց բարեկեցութիւնը և՝ դիմադրելով թշնամուն, եթէ չյաղթեն իսկ, գոնէ որոշ հեռաւորութեան վրայ, որոշ ակնածութեան սահմաններում կը պահեն նրան, վեր կը բարձրացնեն հայութեան անպատուած դրօշակը։ Ոգևորութեան այն ծափահարութիւնները, որոնք կը բարձրանան աշխարհիս բոլոր անկիւններում հայերի ուժեղ դիմադրութեան շնորհիւ, կը լինեն մի նոր և խոշոր ապացոյց մեր ժողովրդի կենսունակութեան, ամենաուժեղ նեցուկը հայերի իրաւունքների և պահանջների իրականացման։

Այս երկու հետևանքներից ո՞րը տեղի կունենայ — ոչ ոք հաստատ չէ կարող նախագուշակել։ Սակայն, ինկատի ունենալով մի շարք երևոյթներ վերջին տարիների կեանքից, դժուար չէ եզրակացնել, թէ ժամանակի ընթացքում ընդհանրապէս դէպի որ կողմն է հակւում ժողովրդի տրամադրութիւնը։

Զը նայած ծայրայեղ աղքատութեան ու մշտական ճնշման, հայ ժողովուրդը համոզւում է, որ իր պաշտպանութեան միակ գրաւականը զէնքն է, և լաւերը — թէև քիչերը — հայերից՝ դիմեցին այդ միակ փրկարար միջոցին։ Դառը փորձերից խրատուած՝ հայ պաշտպանողական խմբերը ստուարացրին իրենց շարքերը և ստացան աւելի հմտութիւն՝ զէնք գործածելու մէջ։ Ժողովրդի առաջնորդ ֆէդայիները քաջութեան ու անձնազոհութեան օրինակներով պահպանեցին ու բորբոքեցին կենդանութեան այն կայծը, որ մեծ կրակ դառնալով, կարող է գրաւական լինել հայ ժողովրդի վերածնութեան։

Այդ ժողովրդական ուժի մեծութիւնից է կախուած այսօրուայ Մուշի և վաղուայ ամբողջ հայութեան ապագան։

Ցանկանք համերաշխութիւն ու սերտ կապ հայ ժողովրդի — մանաւանդ վտանգուած վայրերի — ղեկավար տարրերի մէջ, դիմացկանութիւն՝ աշխատող հայ ամբոխին, վեհանձնութիւն՝ յեղափոխականի սրտին, ուժ՝ հայ ֆէդայու բազուկին։

Նրանց ձեռքին է այսօր մեր պատիւը։

Նրանցից է կախուած հայի ապագան։

ՄՈՒՇ–ՍԱՍՈՒՆ

Մուշից ստացած նամակներից քաղում ենք հետևեալ տեղեկութիւնները, որոնք գաղափար են տալիս իրերի ծանր դրութեան մասին Մուշ-Սասունի շրջանում և պարզաբանում են միաժամանակ այն լուրերը, որ վերջերս տեղ գտան եւրոպական լրագիրներում։

3/15 յունիս, Մուշ

Մշոյ գաւառը երթալով կը շատնայ թիւրք զօրքերով, որ կուգան բոլոր կողմերէ։ Քիւրդ ցեղապետներուն յատուկ պաշտօնական գրեր ուղարկուած են՝ անոնք ի զէն հրաւիրելու։ Խիստ միջոցներ ձեռք կ'առնուին նաև Սասնոյ վերաբերմամբ։ Զինուորաց ջոկատներ զրկուեցան Հոն՝ այլևայլ կիրճեր պահպանելու և լեռներ գնացողներու ճամբաներ կտրելու համար։

Հոգեգալստեան կիրակին, մայիսի 25 (յունիս 8), Մշոյ քաղաքին մէջ խլրտում ընկաւ, իբր թէ յեղափոխականներ եկեր են, լեռը բարձրացեր և հայկական դրօշակ պարզեր, իբր թէ Նոր եկողներուն Անդրանիկն ու ընկերները դիմաւորել են հրացաններու թնդիւններով ևն։

Այսօր իսկ քաղաքիս մէջ մեծ շփոթութիւն կայ. պաշտօնեաներ հաւաքուած են հեռագրատուն։ Վայրիվերոյ խօսակցութիւններէն կ'իմացուի, իբր թէ 65-ի չափ յեղափոխականներ Բուլանըգ տեսնուած են և անկից խոյս տուած՝ Ախլաթ անցած են, ուր և հիմա պաշարման մէջ կը գտնուին։

9/22 յունիս, Մուշ

Մեր վիճակ երթալով կը նեղնայ... Տեղական կառավարութեան շարժումը այս անգամ խիստ կասկածելի կ'երևի։ Գաւառ զրկուած է անհամար զօրք. քիւրդերուն թիւ չկայ։ Քաղաքիս չորս կողմ թնդանօթներ շարուած են. թիւրք ազգաբնակութիւնը մեծ յուզման մէջ է. մի մասը օր առաջ կ'ուզէ դէպք յարուցանել, միսները կը խորհեն, որ դա տէրութեան գործ է և իրենց միջամտելու հարկ չկայ։

Բոլոր հայեր սոսկալի երկիւղի մէջ են։

Բաղէշի մէջ ռուսաց հիւպատոսարան հաստատուած է, բայց նշանակուած պաշտօնեան դեռ ևս եկած չէ։ Մայիս 27-ին (յունիս 9) Կարնոյ ֆրանսիական հիւպատոս տեղս եկաւ և հայ-կաթոլիկաց առաջնորդարան հիւր իջաւ։ Կառավարութիւնը խիստ հսկողութիւն նշանակած էր վրան, որպէս զի ոչ մի յարաբերութիւն չունենայ դրսի աշխարհի հետ։ Երեք օր հոս մնալէ վերջ՝ մեկնեցաւ Բուլանըգի գծով։

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԻԱԾԸ

(ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼԻՈՒԾՆԵՐԸ)

Ենթադրութիւնները իրականացան...

Միապետական ռուս կառավարութիւնը, որ քառորդ դարուց իվեր՝ դարան մտած, միջոցներ չենայեց յափշտակելու հայ-լուսաւորչական եկեղեցուն պատկանող կալուածներն ու ստացուածքը, տուեց **ԵՐԿՐՈՐԴ** և խստագոյն հարուածը։

Առաջին հարուածը՝ հայոց դպրոցներին ուղղածն էր։ Նա կատարուեց մի քանի տարի առաջ միայն, բացարձակ ապօրինութեամբ, յափշտակութեան բոլոր ձևերով և այնքա՜ն անարդար կերպով, որ կառավարութիւնից կախումն ունեցող դատարանն անգամ չդիմացաւ և հակառակ վճիռներ արձակեց։

Երկրորդ հարուածը, որի կարճ բովանդակութիւնը միայն հաղորդեցին հեռագիրները, անհամեմատ աւելի խիստ է և աւելի անարդար։ Մենք այժմ ունենք մեր ձեռքի տակ՝ հրատարակուած յայտարարութիւնը, որ ասում է.

«Կովկասի գլխաւոր իշխանութեան հաւաքած տեղեկութիւնները՝ հայ-լուսաւորչական եկեղեցուն պատկանող գոյքերը հայ հոգևորականութեան ձեռքով կառավարելու մասին՝ ցոյց տուեցին, որ այդ կառավարութիւնը չէ համապատասխանում ոչ պետական նպատակներին եւ ոչ էլ հայոց եկեղեցու շահերին։ Միեւնոյն ժամանակ, ի հետեւումն բարձրագոյն հրամանների 1897 թ. յունիսի 2-ի եւ 1898 թ. մարտի 26-ի ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան յանձնելու հայ-լուսաւորչական եկեղեցական դպրոցները եւ նրանց գոյքերը, հայ-լուսաւորչական հոգեւորականութեան կողմից ծագեց ընդդիմադրութիւն այդ հրամանի իրագործման ժամանակ, որը արտայայտուեց նրանով, որ հոգեւորականութիւնը պահեց մի քանի կալուածներ, որոնցով պէտք է ապահովէր այդ դպրոցների գոյութիւնը։

«Այդպիսի երեւոյթների առաջն առնելու համար անհրաժեշտ համարուեց՝ կենտրոնացնել հայ-լուսաւորչական եկեղեցու գոյքերի կառավարութիւնը պետական հիմնարկութիւնների ձեռքում։

«Այս օրէնսդրութիւնը, պահպանելով հայ-լուսաւորչական եկեղեցու սեպհականութեան իրաւունքը այդ գոյքերի վրայ, չէ զրկում նրան եւ ստացող եկամուտներից, այն մասից, որ ազատ կը մնայ դպրոցների պահպանութեան համար հարկաւոր ծախքերը անելուց յետոյ»։

Համաձայն մինիստրների կոմիտէի առաջարկութեան՝ հիմնուած կառավարչապետ իշխան Գոլիցինի ծրագրի վրայ, Նիկոլայ II 1903 թուի յունիսի 12-ին՝ արձակեց մի բարձրագոյն հրաման, որի իմաստն այս է.

«1) Հայ-լուսաւորչական բոլոր եկեղեցիներին, վանքերին, կրօնական հաստատութիւններին եւ հոգեւոր դպրոցներին պատկանող անշարժ կալուածներն ու դրամագլուխները առնելով հայ հոգեւորականութեան եւ հոգեւոր հաստատութիւնների ձեռքից՝ յանձնել կառավարական հաստատութիւններին եւ ներքին գործերի մինիստրութեան, պահպանելով հայ-լուսաւորչական եկեղեցու սեպհականութեան իրաւունքը այդ գոյքերի եւ դրամագլուխների վրայ։

«2) Ներքին գործերի մինիստրութիւնը, կառավարելով այդ գոյքերը, անելով անհրաժեշտ ծախքերը նրանց պահպանութեան եւ բարգաւաճման համար, ինչպէս եւ հոգալով դպրոցների պահպանութեան ծախքերն, եկամտի եւ տոկոսի մնացորդը յանձնում է այն եկեղեցիներին, որոնցից ստացել է»։

Տպաւորութիւնը մեղմացնելու նպատակով հնարած փոշի է՝ „կառավարել", „հոգալ", „մնացորդը վերադարձնել" բառերը։ Ամենակուլ չինովնիկութեան ձեռքը ընկածը երբէք յետ չի դայ, մանաւանդ որ ներկայ դէպքում չկայ, չէ թոյլատրուում դատաստանական մարմինների միջամտութիւնը, բողոքի ու մեկնութեան ոչէ ձև։

Պետերբուրգի Մետերնիխները անբաւ հարստութիւն են երազում հայոց եկեղեցիների մէջ, հարստութիւն, որը,

նրանց կարծիքով, ծառայում է հայկական շարժման և հակակառավարչական գործերի։ Դրանց իրագործելը մի նոր զէնք պիտի լինի՝ կրկնակի ուժով ստրկացնելու լուսաւորչական հոգևորականութիւնը, մտցնելու եկեղեցու մէջ ոստիկանական ոգի, բռնութեան մի նոր հոսանք...

Դա վերջին գործողութիւններից մէկն է այն դրամայի, որ կարելի է „քաղաքական յափշտակութիւն“ անուանել և որի նպատակը, ծրագիրը ու միջոցները պարզաբանուած են այս նոյն էջերում; „Կովկասեան Խաբրիկների“ մէջ, մի այնպիսի անկողմնապահութեամբ, որ թողել չէ տալիս ամենափոքր հաւատ անգամ ընծայել Պետերբուրգի կառավարութեան մեկնաբանութեան և կամ նրանից ներշնչուած ռուս մամուլի անարգական յօդուածներին։

Կովկասեան հայ հասարակութեան վիրաւոր, դառնացած սրտին այս նոր կսկիծն էր պակաս։

Նոր օրեր, նոր ցաւե՞ր...

ԱՐԻՒՆԻ ԻՐԻԿՈՒՆՆԵՐ

ԶՂՋՈՒՄԻՆ ԹԱՓՕՐԸ

ՂԱՐԻԲԻՆ ՀԱՄԱՐ

Ըմբոստացումի և աւերումի իրիկուան մը սուրբերուն մէջէն՝
Երբ Հերոսներու աստուածային արիւնը՝ հողին հեծկլտացող կուրծքէն ի վեր,
Յաղթութեան և յոյսի կարմիր արեգակի նման կը բարձրանար,
Ցանկարծ գարհուրելիներուն, շփոթածներուն և մինաւորներուն խուճապը սկսաւ,
Քաղաքներէն և աւաններէն դուրս, հովիտներէն, բլուրներէն և գետերէն անդին,
Դէպի անստոյգ հանգրուանները մահացնող օտարացումներուն...

Ու հազարաւորներ էին անոնք, հազարաւորներ ու հազարաւորներ
Որ մէկէնիմէկ աղէտաձայներէն զարհուրած դեռ չէին կրցեր իրենց քայլերը վճռել,
Իրենց դաստակներն ու սուրերը գալարելու, թշնամիները նայուածք նայուածքի ճակատելէն,
Եւ այս բոլորը խելայեղուած՝ մոխիրի, հոգեվարքի և լացուկոծի քառուղիներէն անցան,
Անոնց հետ որ, աւաղ, կոտրտուելով, մեռնելով, ջախջախուելով, արիւնուելով կըշտապէին,
Իրենց մազերը անգթօրէն փետտելով և կորսուած զաւկներու ի խնդիր...
Եւ օրերով և խաւարներով սահմանէ սահման խուճապեցին,
Եւ կային որ կիսամեռ մարմիններ ուսերնուն վրայ և գեռնաքարշ՝ կը փախչէին,
Կային որ իրենց հաշմուած ձեռքերէն և տրորուած սրունգներէն մաս առ մաս,
Ճամբաներու քարերուն, հողակոյտերուն և մացառներուն վրայ,
Եղերականօրէն, արիւնոտած լաթերու պէս՝ թափթփելով՝ կըշտապէին,
Ընդվզումի շառաչներուն և հրդեհուած քաղաքներուն առջևէն...
Զարհուրալից արշաւանքովը անապատներու այն փոթորկին
Որուն վայրագութեանը վրայ, քալող պնտառներու հանգոյն, կայծակները կը տապալուին...
Երկրին բոլոր ծայրերէն կը խուժէին ասոնք, բազուկներնին հովերուն՝
Եւ չի մտեցող օգնութիւններու պաղատագին տարածուած,
Կոյրերու խաւարչտին և անգիտակից խուռներամի մը այնչա՞փ նման
Որ զայրագին ու մոլեգնած ու առխարխափ,
Ապառաժներու անագորոյն բաղխումներուն պիտի վազէր...

Բայց Մէկը որուն մտածումը մոլորածներու այս մղձաւանջէն կը խենթենար,
Որուն հոգին կ՚արիւնոտուէր և որուն Ուխտը իր ներսիդին իր կոչումը կը ձայնէր,
Ամբոխին առջև աշտարակուելով՝ անոնց վազքը դադրեցուց, և ծանրադէմ՝ ըսաւ.
Իր խօսքերը իր Կամքին և իր Հաւատքին չափ անձնուրաց էին և զօրաւոր,
Իր շունչը սրտոտ, նայուածքները պղտոր և իր հսկայի ճակատը բոցավառ։

Եւ քայլերը կասեցան և վազքը դադարեցաւ և կամքերը պրկուիլ սկսան՝ երբ Անիկա կը խօսէր...

«Դէպի ե՞տ, դէպի ե՞տ, դէպի ե՞տ, և ըսէ՛ք, դեռ ո՞ր յոյսին և ո՞ր գթութեան
Մահացու, անողորմ ու մարդկային այդ ապառաժներուն դիմաց,
Այսպէս պիտի երթանք կարաւան առ կարաւան, խելայեղաբար և բազկատարած՝
Մեր իրաններն ու մեր ճակատներն անոնց հանդէպ, անգամ մըն ալ կոտրտելու...

Ըսէք, դէպի ո՞ր օգնութիւնը և դէպի ո՞ր արիւնարբու թշնամիները պիտի քալենք...
Դէպի ո՞ր շնորհին և ո՞ր մարդասիրութեան թունաւոր բաժակներուն
Պիտի երթանք մեր ծարաւէն սառած շրթունքները կարկառելու։
Ո՞ր անողոք աստուածութեան և ո՞ր անողոք խորանին կը յառաջանանք,
Մեր պաշտամունքը, մեր արիւնը և մեր արցունքը անոնց առջև դեռ թափելու...
Ո՞ր բարբարոսութեան և ո՞ր բռնապետին անողորմ ճիրաններէն,
Մենք մեր կեանքին՝ մեր հոգիին և մեր հողին փրկանքը կը յուսանք,
Ո՞ր արեգակին, ո՞ր գիշերին և ո՞ր հորիզոնին տակ՝
Այսպէս կերթանք մեր փախուստէն ամօթահարի մարմինները գերեզմանելու...
Ո՞ր անդունդին բերաններէն և ո՞ր ժայռին կատարներէն, այս իրիկուն,
Պիտի երթանք, մեր ստրուկի ձեռուըներովը մեր աչուըները փակած՝
Վատերու պէս դէպի անէացումին խորխորատները գահավիժուելու...
Մինչդեռ անդին, մինչդեռ անդին, մեր բոլորին համար, մեր ամենուն սիրոյն,
Մաքառումի, քանդումի և յոյսի հողին վրայ,
Ազատութեան ջահակիրները ընդվզումի բոցերէն աստուածացած՝
Եւ իրենց դիւցազնի Կամքէն ամենազօր, գերագոյն կռիւներու Կռիւը կը յաղթեն...

„Ձեզի եմ, դէպի ե՛տ, դէպի ե՛տ, դէպի ե՛տ արշաւենք,
Մեր թմրութենէն և մեր սարսափէն առնաբար սթափելով,
Եւ թո՛ղ մեր տեղափոխուող ծովի զարհուրանքը թշնամիները խիզախէ,
Թո՛ղ մեր ակռաները զանոնք յօշոտեն և մեր բռունցքները վայրագօրէն հարուածեն.
Թո՛ղ մեր ձեռքերը ճամբաներու հրաքարերովը զինուին,
Թո՛ղ մեր քայլերը հնչեն և մեր վրէժի և քաղցի աղաղակը որոտայ,
Թո՛ղ մեր կարաւանը մեր յառաջապահ եղբայրները պատնիշէ,
Թո՛ղ մեր թևերը դուռներուն ետևը լքուած մեր զաւկըներուն երկարին,
Թո՛ղ մեր բերանները զանոնք համբուրեն և վաղորդայնին Յոյսը զանոնք օրօրէ,
Թո՛ղ մեր ատելութեան և մաքառումի ձայները զանոնք կազդուրեն,
Թո՛ղ մեր այսօրուան քայլերը վաղուան կռիւին մէջ անոնց քայլերը որոշէն,
Եւ թո՛ղ մեր ճակատին, մեր մտածումին և մեր հոգիին վերքերն անոնց համար,
Ըմբոստացումի և ազատութեան խորհրդանիշերը հանդիսանան...

„Ուրեմն դէպի ե՛տ, դէպի ե՛տ, որովհետև, ճշմարի՛տ, ճշմարի՛տ կ'ըսեմ ձեզի,
Հայրենիքի այս լեռներէն, դաշտերէն, այգիներէն և հովիտներէն անդին,
Ուրիշ ամե՛ն աղբիւր, ամե՛ն աղբիւր, մեր բերաններուն մէջ իր թոյնը պիտի վազցնէ,
Բոլոր դուռները ու բոլոր անցքերը ու բոլոր ուղիները մեր առջև պիտի խափանուին...
Բոլոր յոյսի աստղերը մեզի համար պիտի խղդուին և ամեն արև պիտի խաւարի...
Մեր հացին ալիւրը մերիններուն փշրուած ոսկորներէն պիտի շաղուի...
Մեր նախնիքներուն փառաւոր անունը մեր անունին տակ պիտի փճանայ,
Ու վերջապէս բոլոր օտարութեան երդիքները՝ երկաթակոյտերու ծանրութիւնով մը ծանր,
Անողորմաբար, մեր գլուխներուն և մեր ուսերուն վրայ՝ պիտի փլչին"...

Պատգամաբերը իր խօսքերը դադրեցուց իր խումբերուն հետ յառաջանալով,
Երբ զղջումի թափորը դէպի երկիր, ծնրադիր և դողդոջուն, պաղատեցաւ...

„Թողութի՛ւն մեզի, թողութի՛ւն մեր բոլորին, թողութի՛ւն, ո՜վ մայր-երկիր,
Որ քու ցաւերդ, քու նայուածքներդ և քու սուրբ կռիւդ լքելով, քեզի դիմաց մեղանչեցինք.
Ընդունէ մեզի, քանզի մեր մարմիններն ու մեր մտածումը, այս իրիկուն,
Քու դիւցազնական Առաքեալներդ իրենց շունչերովը զօրացուցին...
Ու մեր յուսահատութենէն՝ մեր առջև յաղթութեան Յոյսը կառուցուեցաւ...
Ընդունէ մեզի, գիտենք որ քու փրկութեանդ մէջն է Փրկութիւնը մեր ամենուն"...

Եւ հիմա բովանդակ թափորը վճռական՝ հորիզոնէ հորիզոն՝ դէպի Հողը կը խոյանար,
Մինչդեռ ատելութեան և սիրոյ և զղջումի արցունքները անոնց աչքերէն կը հոսէին...

ՍԻԱՄԱՆԹՕ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՎԱՆԷՆ

21 մայիս, 1903

Առաջները գրած էինք, որ Հիւսէին փաշան նպատակ ունի աւերակ գիւղերը շինել և քրդերով բնակեցնել։ Այսօր այդ ծրագիրը իրագործելու վրայ է. այդ նպատակով իր ծառաներուն կը պատուիրէ երթալ շրջակայ բոլոր հայ գիւղերը, եկեղեցիները և վարժարանները քանդել, աւերել և անոնց վրայ եղած բոլոր փայտերն ու գերանները գիւղացոց շալակը տուած՝ բերել քրդական աւերակ գիւղերը նորոգելու։ Ծառաները փաշայի այս հրամանը ստանալուն պէս՝ կերթան հայ գիւղերը և կըսկսին քանդել ու աւերել։ Գիւղացիք շարած չգիտեն, ի՞նչ ընեն։

Հայոց Ձորի Արատիս ըսուած գիւղը բաղկացած է 30 տուն հայէ և 5 տուն քիւրդէ։ 1899 թուին ուրիշ գիւղերուն հետ այս գիւղն ալ կողոպտուեց ու աւերուեց։ Ժողովուրդը քաղցածութենէն ճարահատեալ՝ կը դիմէ կառավարութեան որ, իրը պարտք, պանքայէն իրեն դրամ տրուի՝ քայքայուած կեանքերնին վերականգնելու համար։ Պանքան 120 ոսկի դրամ կուտայ, երեք տարի պայմանաժամով։ Այժմ լրացած է պայմանաժամը, և կառավարութիւնը կը պահանջէ իր պարտքը, սակայն գիտնալով, որ գիւղացիք անկարող են այդքան դրամ միանգամէն վճարել՝ կ'առաջարկէ մէկէմտանք ցեղէն թարախուքցի արնաուտ ծագում ունեցող Բէկիր աղային վերցնել այդ գիւղը և փոխարէնը տալ գիւղացիներու վրայ մնացած պարտքը՝ 120 ոսկին։ Քիւրդը բնականաբար սիրով կ'ընդունի այս առաջարկը և կ'ուզէ տէր ըլլալ վերոյիշեալ գիւղին։ Գիւղացիք երբ կ'իմանան այս բոլորը՝ կը դիմեն կուսակալին. վերջինս մի ամիս ժամանակ միայն կուտայ, սպառնալով ամիսէն վերջը գիւղը առանց այլևայլութեան յանձնել քիւրդ բէկին, եթէ գիւղացիք անկարող ըլլան այդ մէկ ամսայ մէջ իրենց պարտքերնին հատուցանել։ Ի՞նչ ընեն աղքատ ու անճար գիւղացիք, ո՞ւր դիմեն...

Վանայ շրջանի Ասնիա ըսուած գիւղը, որ բաղկացած է 12 տուն հայէ և 28 տուն ասորիէ, քիւրդի մը պատճառաւ՝ անլուր նեղութեան մէջ է։ 1902 թ. այս գիւղը եկած է Թակուրցի Նէմէթ Աղա-Հիւսէին պէյի հօրեղբօր որդին, որ առաջ կապրէր Կարանի Մուստաֆա պէկի մօտ և որ սպանելով վերջինիս հօրեղբօրը՝ Դահիր խանին՝ այլևս անկարող կ'ըլլայ հոն ապրիլ ու կը փախչի կուգայ վերոյիշեալ գիւղը՝ Ասնիա։ Հոս հողեր կ'առնէ, շինութիւններ շինել կուտայ ու կըսկսի աւազակութեամբ պարապիլ։ Գիւղացիք կը դիմեն կուսակալին, որպէս զի այս քիւրդը հանէ իրենց գիւղէն, խոստանալով վճարել անոր թէ հողերու և թէ տներու գինը, որոնց համար ինքը ոչ մէկ ղրուշ չէ ծախսեր և որ ձեռք է բերեր ամբողջովին գիւղացիներու աշխատանքով և արիւն-քրտինքով։ Կը դիմեն նաև անգլիական հիւպատոսին միևնոյն խնդրանքով, բայց իզուր։ Ո՛չ կուսակալը և ո՛չ ալ հիւպատոսը կը լսեն անոնց բողոքը։ Առաջինը լաւ մը կըշտանալով ըսեր է հիւպատոսին, թէ այդ գիւղը Վարագայ սարին մօտ գտնուելով՝ միշտ վտանգաւոր խռովութիւններու է ենթակայ և թէ ուրեմն քիւրդին ներկայութիւնը անհրաժեշտ է հոն՝ վտանգներին դիմադրելու համար։ Գիւղացիք նորէն դիմեցին, բայց այս անգամ ալ նոյն բացասական պատասխանը տրուեցաւ իրենց։ Խեղճ գիւղացիք այլևս համբերել չկրցան և մայիսի 8-ին ահագին խմբերով եկան քաղաքը լեցուեցան, շրջապատեցին կուսակալի տունը և յայտնեցին, որ ա՛լ անկարող են հանդուրժել քիւրդ աւազակի անգթութիւններուն ու գազանութիւններուն։ Կուսակալը հրամայեց գիւղացիներուն անյապաղ գիւղը վերադառնալ, սպառնալով չլսողին բանտ ուղարկել և տանջանքներով սպաննել տալ։ Այս և այլ մեծամեծ սպառնալիքներն ալ անօգուտ անցան. գիւղացիք չեն ուզեր վերադառնալ ու մինչև օրս ալ կըսպասեն հոս՝ պնդելով իրենց պահանջի վրայ։ Տեսնենք, վերջը ի՞նչ կ'ըլլայ։

Ապրիլ ամսու կիսին Պարսկաստանից կ'ուզէին իրենց հայրենիքը վերադառնալ երկու թրքահայ՝ տէհերցի Ներսոյի տղայ Գէորգը և Յայնկուսներու եկեղեցու Տէր Մեսրոպ քահանան։ Ասոնք իրենց հետ կունենան հրէայ ընկեր մը և Շէյխ Համիտ փաշայի ծառան, Աւտլանուն քիւրդը, իբր վստահելի և ապահով ուղեցոյց, որ կը խոստանայ և կ'երդնու՝ անվտանգ իրենց տները հասցնել։ Բայց դրժելով իր խոստումն ու երդումը՝ ճանապարհին կ'ուզէ սպանել զանոնք, և հրէայի ներկայութիւնը միայն արգելք կ'ըլլայ այդ բանին։ Քիչ ետքը, երբ հրէան կը բաժնուի անոնցմէ և իր գիւղը կերթայ, քիւրդ առաջնորդը՝ մինակ գտնելով հայերը, կըսպաննէ զանոնք գիւղին դեռ չմօտեցած և դիակներն ալ պահելէն ետքը փաշային մօտ կուգայ ու կը յայտնէ, որ ինքը երկու ֆէդայի սպաննած է։ Փաշան, իմանալով որ ֆէդայիները անզէն են եղեր՝ խորհուրդ կուտայ ձայն չհանել, որպէս զի չտարածուի։ Քանի մը օրէն ետքը սակայն լուրը կը տարածուի և սպաննուած Գէորգին հայրը կերթայ տեղեկութիւն առնելու և տղուն դիակը թաղելու։ Փաշան ամենալաւ միջոցը կը համարէ փնտրողին ևս սպաննել տալ նոյն քրդի միջոցաւ։ Քրդի կիներէն մէկը կ'իմանայ այս բանը, անմիջապէս լուր կուտայ տղուն հօրը, որ հեռանայ իրեն գալիք վտանգէն։ Խեղճ հայրը տղուն դիակը որոնելու և զայն թաղելու նպատակը կը թողու անմիջապէս և փախչելով՝ կեանքը կ'ազատէ։

Ձորս ամիս առաջ, Վարդգէսի ձերբակալման և մատնիչի սպանութեան պատճառով բանտարկուած 25-ի չափ անմեղ հայերը դեռ մինչև օրս կը մնան բանտը առանց քննութեան։ Ամէն օր անտանելի չարչարանքներու կ'ենթարկեն զանոնք և կը հարցնեն՝ թէ ո՞վ է տաճիկը զարնողը, ո՞վ է Վարդգէսը ճանչցողը ևն։ Ինքը կառավարութիւնը լաւ գիտէ և լաւ կը ճանաչէ մատնիչին զարնողը. գիտէ, որ նա քաղաքի մէջ չէ ու քանի որ ինքը կրնար ձեռք բերել զանիկայ, իր կատաղութիւնը անմեղ մարդոց գլխուն կը թափէ։ Բանտարկեալներու մէջ կայ նաև տաճիկը զարնողին եղբայրը, որին կըստիպեն եղբօր տեղը յայտնել կամ գնալ գտնել ու բերել՝ կառավարութեան յանձնելու։ Մայրը կը բողոքէ այս բոլոր բռնութիւններուն դէմ՝ յայտնելով, որ տանը ուտելու հաց չունին, որ զուրկ են ամենակարևոր ու ամենահրաժեշտ կենսական պահանջներէ և որ իրենց միակ յոյսն ու ապաւէնը բանտարկուած որդին է։ Սակայն մօրն ալ նոյն պատասխանը կուտան՝ „Գնա միւս տղադ բեր, որպէս զի այս մէկը քեզի տանք“։ Խեղճ մայրը չգիտէ ինչ ընելիքը...

Ի դէպ։ Բանտերը ամենագառն վիճակ մը ունին։ Հայ բանտարկեալները մութ ու խոնաւ զնդաններուն մէջ

անգամ հանգստութիւն ու դադար չունին. ամէն օր և ամէն ժամ կը ծեծուին ու կը ջարդուին քիւրդ բանտարկեալներէն։ Արդէն քանի մը անգամ թափել են խեղճ հայերուն վրայ և սուրերով ու դաշոյններով զանոնք վիրաւորելէն ետքը՝ մահուան վիճակի են հասուցեր։ Կառավարութիւնը այս ամէնը բաւ չհամարելով՝ ինքն ալ միւս կողմէն պակասը կը լրացնէ. բանտարկեալներու ոտքերը, ձեռքերն ու վիզը ծանրակշիռ շղթաներ կապելով՝ բոլորովին անհնարին կը դարձնէ ոեւէ շարժում։

ՆԱՄԱԿ ԵՐԶՆԿԱՅԷՆ

3 յունիս, 1903

Երզնկայի մէջ կառավարութիւնը մասամբ դադրած էր ակնյայտնի գործելէ, բայց հիմա կրկին սկսաւ։ Արդէն դուք ալ գիտէք, որ տուրքերու հաւաքումը յանձնուած էր գազանաբարոյ մարդոց ձեռք. վերջիններս, ամբողջ ձմեռ հանգիստ առնելով, գարնան վայրենի գազաններու նման դուրս կը նետուին և ո՞ւր—դէպի կեավուրի տունը, տուրք հաւաքելու, ձմրան պաշար ամբարելու։

Խեղճ գիւղացիք հազար և մէկ զգուշութիւններով կը հիւրասիրեն, կը կերցնեն, կը խմցնեն և իրենց պանդուխտ եղբայրներու քրտինքի արդար բաժինը կը հանեն կուտան այդ վատերուն։ Այն գիւղացիք, որ պանդխտութեան մէջ չունին եղբայր կամ հայր, ստիպուած են տուն տեղը ծախել՝ տուրքը վճարելու համար։ Ի՞նչ ընէ, երբ իր մանուկները մերկ, անօթի կը թափառեն ձորերու մէջ. ի՞նչ կրնայ ընել, երբ տեսնէ այդ ճակատագրին ղրկուած փոքրիկներու յօշոտուած դիակները։

Վերջերս Քեմախի գիւղերու մէջ սկսաւ ակնյայտնի գործել Թէմիր անուն նշանաւոր աւազակապետ մը. իր գլխաւոր քաջալերանքն է կառավարութենէ գաղտնի վարձատրիլը։ Ավանք-վանք, որ կառուցած է խրոխտ լերանց մէջ, զոհ գնաց Թէմիր աւազակապետին։ Վերջինս տասնի չափ հետևորդներով կերթայ կը պաշարէ վերոյիշեալ վանքը. վանքի երիկ մարդիկ դաշտային աշխատութեանց պատճառով բացակայ կը լինին։ Քիւրդերը կը յարձակին վանքի վրայ, կը կողոպտեն, ինչ որ կը գտնեն, տուները անբնակելի կը դարձնեն, և բոլոր կիներն ու մանուկները ահ ու սարսափի մատնած՝ կը հեռանան։ Ճամբան հովին հանդիպելով՝ կ՚առնեն անկէ հօտը։ Քիւրդ պէկը հօտը և աւարը կը յանձնէ 7 ընկերներու, հրամայելով իրենց հողը տանել, իսկ ինք 3 ընկերներով կերթայ Կառնի գիւղ, ուր կը գտնուէր վանքի պետը՝ Գալուստ Բրօխորոնեան, բոլորովին անտեղեակ իրեն հասած դժբախտութեան։ Թէմիր պէկ կերթայ Գալուստ աղայի մօտ, կը խօսակցին, սուրճ կը խմեն ևլն։ Պէկը կը խնդրէ, որ մինչև Ս. Թորոս եկեղեցին իրեն ընկերանայ, կարևոր գաղտնիքի մը յայտնութեան համար։ Գալուստ աղան կը հնազանդի։ Երբ բաւական կը հեռանան գիւղէն, պէկը իր երեք ընկերներով սուսերամերկ կը յարձակին Գալուստ աղայի վրայ սուրի հարուածներ տալով և գնդակներով ալ ուղեղը կը պայթեցնեն, վերջ տալով այդ ողբացեալ մարդու կեանքին։ Թէմիր պէկ լուր տարածած է, թէ իր գաղանութիւնները յաջորդաբար պիտի իգործ դնէ բոլոր հայ գիւղերուն վրայ։

ՆԱՄԱԿ ԲԱՍԵՆԷՆ

2 յունիս, 1903

Բասենը մէկն է տաճկահայ այն գաւառներից, որոնք արիւնոտ դէպքերի օրերին ամենից շատ են ՝ի՝սասել և որոնց վրայ ամենից շատ է ծանրանում տաճկական բէժիմը իր բոլոր այլանդակութեամբ։ Դաշտային մի երկիր է սա, շրջապատուած լեռնաբնակ քիւրդ ցեղերով ու բնակեցրած թիւրք գերակշռող ազգաբնակութեամբ։ Դրա շնորհիւ ոչ մի գաւառի հայեր, գուցէ այնքան արհամարհուած ու ստորացած չեն, ինչքան Բասենի հայերը։ Գտնուելով Էրզրումի անմիջական ազդեցութեան տակ ու ռուսական սահմանագլխում, կառավարչական կասկածներն ու խստութիւնները՝ սկսած կազմակերպուած թալանի օրերից՝ հասել են իրենց գագաթնակէտին։ Բասենով են անցնում Էրզրումից դէպի Ռուսաստան և Ալաշկերտ, Բայազիդ ու Վան տանող պոստային ճանապարհները, և շնորհիւ այդ հանգամանքի՝ տաճկական զօրքը անպակաս է Բասենից։ Իսկ տաճկական զօրքի յաճախակի ելումուտքը կատարեալ պատուհաս է ժողովրդի համար։ Ծեծ, հայհոյանք, անարգանք, կեղեքումն և այլևայլ տեսակի ձրիակերութիւնն ու կաշառակերութիւնը այդպիսի շրջանների ընթացիկ երևոյթներից են, և մենք կանգ չպիտի առնենք դրանց վրայ։

Բայց մշտական, ընթացիկ երևոյթների շարքն անցած ու շատ անմեղ սովորութիւն դարձած այդ կեղեքումներից դուրս, իբրև ցաւոտ օրերի յիշատակ, Բասենի հայերի դէմ կառավարութեան ձեռք առած բացառիկ միջոցներն ու հիւանդոտ կասկածոտութիւնը այնպիսի պայմանների մէջ են դրել ժողովրդին, որ նա անթիւ ու մշտական հարստահարութիւնների և անիմաստ խստութիւնների տակ՝ դանդաղ տնտեսական քայքայման և բարոյական հիւծման է ենթարկուել։ Բոլոր հայ գիւղերում՝ իբրև մշտական արթուն հսկիչ՝ մոցրուած է մի քանի տուն քիւրդ կամ թիւրք բնակիչ։ Բռնի գաղթականութեան սիստէմը, սկսած վաղուց ի վեր, առաջ է տարուում ամէն միջոցներով և այժմ։ Բազմաթիւ հայ գիւղեր, որոնք վերջին 10 տարում կատարելապէս դատարկուել են հայերից ու այժմ զուտ թրքաբնակ են, պահել են միայն իրենց հայկական անունները, ինչպէս՝ Վանք, Սրբ. Օհան, Հինձ, Ամրագոմ, Ծառս, Սանամէր. կիսով չափ թրքաբնակ են դարձած՝ Ծանծաղ, Թորթան, Պատիժվան, Հերթև և կիսով չափ քրդաբնակ՝ Խոսրովաւան, Խաչլու, Հարսնիքար, Թաւոնց։ Այդ գիւղերի մեծ մասը բնակեցրուած են Ռուսաստանից գաղթած թիւրքերով կամ՝ քրդերով, որոնք, երես առած կառավարութեան թելադրութիւնից, շարունակ քշում են հայերին Բասենի շրջանից։ Երկրի լեռնային մասերը արագութեամբ անցնում են Ռուսաստանից գաղթած քիւրդ ջամալդանցիների ձեռքը։ Նոյն ջամալդանցիների համիդիէի բինբաշին, որ եկել բնակութիւն էր հաստատել Խոսրովաւան գիւղից գաղթած 15 հայերի տներում, իր կեղեքումներով, ալան թալանով տեղական թէ թիւրք և թէ հայ ժողովրդին այն աստիճան յուսահատութեան էր հասցրել, որ նրանք կառավարութիւնից խնդրել էին կամ այդ աւազակ զօրքի հազարապետին իրենց միջից հանեն և կամ իրենց թող տան ուրիշ տեղ գաղթելու։ Կառավարութիւնը քննիչ է ուղարկել համիդիէների հրամանատար Հիւսէյն փաշային և խոստացել է քիւրդ բինբաշուն դուրս հանել

գիւղից։ Թիւրք և քիւրդ այդ խառն բնակիչները, բացի տիրողին յատուկ բռնութիւններից և մահմէտականին յատուկ հարստահարող հակումներից, հանդիսանում են իբրև մոտիկ հսկիչներ և դրացի լրտեսներ, որոնցից ամէն մէկը կարող է իր հարևան հային, որն այս կամ այն պատճառով իրեն դուր չի գալիս, իբրև յեղափոխական և առհասարակ կասկածելի մարդ ներկայացնել կառավարութեան առաջ,—այնուհետև բանտը, անլուր տանջանքներով շաղախած ծեծը, կաշառքը՝ արդէն պատրաստ են։ Բացի դրանից, այդ թիւրք և քիւրդ աղաների և բէկերի ձեռքին է գիւղի հողերի մեծ մասը, իսկ հայերը մեծ մասամբ կամ զուրկ են հողի այնպիսի քանակից, որը անհրաժեշտ է ապրուստի ուրիշ միջոցներից զուրկ, արդիւնաբերութիւն, առևտուր, արհեստ չունեցող մի տարրի ապահովութեան համար, և կամ մարաբաներ են թիւրք կամ քիւրդ աղաների և բէկերի մոտ։

Սա դեռ ևս բոլորը չէ. իբրև մշտական պատուհաս՝ հայ գիւղերից շատերում, դէպքերից յետոյ, հաստատել են մեծ քանակութեամբ զօրքեր, առանձնապէս այն գիւղերում, որոնք թալանի ժամանակ արտակարգ դիմադրութիւն են ցոյց տուել մի քանի հազար քիւրդերի։ Այդպիսի գիւղերից է Դալիբաբան, սահմանից 2-3 ժամ հեռու, որ 50-60 հոգով կարողացել էր կուռել 2,000 քրդերի դէմ և գիւղն ազատել թալանից։ Համարելով յեղափոխականների բոյն՝ կառավարութիւնը այդ գիւղում մշտապէս հաստատել է մի թաբուր զօրքի կենտրոնատեղ, որից 80-100 հոգին բնակւում են գիւղում, իսկ մնացածները ցրուած են Ալիհաքրակ, Թոտի, Ճռասոն և ուրիշ գիւղերում։ Բացի զօրքերից, Դալիբաբայում հաստատել են զապտիաների մի խումբ ու երկու փօլիս. գիւղը ենթարկուած է խիստ հսկողութեան։ Գիւղի չորս կողմը գիշեր և ցերեկ կանգնած են պահակներ։ Գիւղացիներից ոչ ոք իրաւունք չունի առանց հազարապետի թոյլտուութեան ուրիշ տեղ գնալ. դրսից եկող օտարականներին միշտ հարց ու փորձի են ենթարկում և ապա գիւղի 3 մատնիչներից մէկին դնում եկողի հետ, որը մինչև նրա գիւղից ելնելը, պէտք է մնայ եկւորի հետ անբաժան, իմանայ՝ թէ ում հետ է տեսնւում և ինչ է խօսում։ Եթէ գիւղացիներից մէկի տանը հիւր է իջնում, տանտէրը անմիջապէս պէտք է տեղեկութիւն տայ հազարապետին։ Զօրքերը գիշերը իրաւունք ունեն պտտել հայերի տները, որպէս զի օտար մարդ չլինի։ Զօրքի այդ իրաւունքը այնպիսի կեղտոտութիւնների աղբիւր է հանդիսանում, որ իւրաքանչիւր գիւղացի առանց արտասուքի չէ կարողանում պատմել։ Իրենց իսկ գիւղացիներից շատերի ասելով, գիւղում չկայ կին կամ աղջիկ, որ պղծուած չլինի զօրքերից։ Գիշերւայ ուշ ժամին զօրքերը մտնում են տները, քնից զարթեցնում տանտիրոջ, պատիրում իրենց համար թէյ, ընթրիք, ոգելից ըմպելիքներ (վա՛յ այն գիւղացուն, որ միջոց չի ունենում ցանկացած կերակուրը պատրաստել) և ապա ոևէ պատրւակով տղամարդկանց դուրս ուղարկում...

Բացի վաղուց ի վեր հաստատուած այդ խստութիւններից, այս գարնան դիմեցին սրտակարգ միջոցներին։ Մակեդոնական շարժումներից սարսափահար կառավարութիւնը, առաջնորդւելով ամբոխային, հեքիաթական լուրերով, թէ ջան-ֆէդայիները մի քանի հազար ձիաւորներով պէտք է յարձակում գործեն և ջարդեն մահմէտականներին, զօրքերի թիւը սահմանագլխում կրկնապատկեց և Հերթև ու Ծանծաղ գիւղերում, ուր մինչև այժմ զօրք չկար, մշտական զօրք նշանակեց։ Դրա հետ միասին աւելացան կատարւող խստութիւններն ու կեղեքումները։

Վերջին ժամանակներս համիդիէ աւազակները տեսնելով, որ վերջին ծայր չբաւորութեան հասած հայ գիւղացիների մոտ թալանելու, կողոպտելու այլևս ոչինչ չի մնացել, խրախուսւած կառավարութեան ձեռնպահութիւնից դէպի քրդերի արարքները՝ իրենց շահատակութիւնները սկսեցին տարածել նաև խաղաղ թիւրք ազգաբնակութեան վրայ։ Աւարառութիւնները այնքան շատացան, որ թիւրքերը, այլևս չկարողանալով տանել բրդական հարստահարութիւնները, 60 գիւղ միացած, մի քանի անգամ հեռագրով բողոքեցին 4-րդ բանակի հրամանատար մուշիր Զաքի փաշային (Երզնկա) և զինուորական մինիստրին։ Բողոքի հետևանքը այն եղաւ, որ յարմար առիթի սպասող կառավարութիւնը ցրուեց բոլոր գիւղերում հետևակ զօրք և ղըռ-սարդարի կոչուած հեծելազօրք նշանակեց։ Այդ զօրքերը շարունակ պէտք է պատեն Բասենի գիւղերում, որպէս զի քրդերը սարերից չնեղեն և չվնասեն ժողովրդին։ Զևի համար այդ հեծելազօրքը խլեց մի քանի պատահական քրդերի զէնքերը ու այդպիսով քրդերի մէջ առաջ եկաւ մի ուժեղ, բայց խուլ դժգոհութիւն։ Քիւրդ մեծաւորներից շատերը սպառնացին միանալ ջան-ֆէդայիների հետ, ոմանք սպառնացին կրկին դառնալ Ռուսաստան, ոմանք էլ՝ համիդիէի շարքերից ելնել։ Ընորհիւ մտքերի առաջ եկած յուզման՝ բացւեց թիւրք կառավարութեան ներքին դիտաւորութիւնը. ցրուած հեծելազօրքի սպաները շատ քրդերի մոտ խոստովանել էին, թէ իրենք նշանակուած են իսկապէս հայերի համար, որ թիւրքերի բողոքը միայն պատրւակ էր և քրդերից մի քանի զէնք առնելը՝ միայն խաբելու միջոց։ Եւ իսկ, այն զօրքերը, որոնք պէտք է պտտէին սարերում քրդերի մէջ, կրկին ծանրացան հայ գիւղերի վրայ, իհարկէ միշտ կերակրւելով ժողովրդի հաշիւին։ Ճանապարհներին պատահած ամէն մի խեղճ ու կրակ հայի բռնում, հարց ու փորձի են ենթարկում և որոշ չափի կաշառք առնելուց յետոյ՝ արձակում։

Ահա մի քանի փաստեր այդ զօրքերի սխրագործութիւններից. — Իւզվերան գիւղի մոտ նրանք պատահում են նոյն գիւղացի 14-15 տարեկան տղաների, որոնք գնացել էին գիւղից քիչ հեռու, իրենց սահմանում սարից ձիւն բերելու։ Զօրքերը բռնում են նրանց իբրև կասկածելի մարդկանց, ծեծելով գիւղ բերում և արձակում միայն այն ժամանակ, երբ գիւղացիք ու գիւղի զապտիաները հաստատում են դրանց նոյն գիւղից լինելը։ Բոլոր հայերին խստիւ արգելուած է երեկոյեան ժամի 8-ից յետոյ գիւղի շրջակայքում լինել. ոևէ հարևան գիւղ գնալու դէպքում՝ տեղական զօրքերից հարկաւոր է իրաւունք ստանալ։ Առանց այդ իրաւունքի գիւղից 4-5 օր ուշացողին, գիւղում գտնւող թիւրքերի շնորհիւ, անմիջապէս ձերբակալում են, իբրև Ռուսաստան գնացողների և ֆէդայի գրւողների։ Հեգեպատ և Եղան գիւղերի մի քանի տներում, թշնամական յուցմունքների հիման վրայ, խուզարկութիւններ եղան. չնայելով, որ ոչինչ չգտան, բայց կալանաւորեցին գիւղի Սարգիս վարժապետին և բանտ դրին։ Խեղճի մեղքը այն է, որ նա ունէր մի քանի ֆրանսերէն դասագրքեր և որ նա վարժապետ է. այդքանը արդէն բաւական էր, որպէսզի նա հան-

դիսանար յեղափոխականների իւզբաշի կամ կոմիտէբաշի։

Վերջերս սկսել են Բասենի հայ գիւղերում պտտել Թիւրք լրտես-վաչադներ, որոնք առաջարկում են հայերից ցանկացողներին ուղեկցել Ռուսաստան, և կամ տանում, ճանապարհին բռնել են տալիս, կամ գնալու տրամադրութիւն ցոյց տուողներին ներկայացնում են իբրև կասկածելի մարդ։ Զար լեզուները ասում են, որ այդ սատանայութեան մէջ խառն է նաև Էրզրումի բաշ-կոմիսարի մատը։

ՆԱՄԱԿ ՄԱՆԱԶԿԵՐՑԷՆ

ԵՐԿՐԱՇԱՐԺ ԵՒ ԻՐ ՊԱՏՃԱՌՔԸ

10 յունիս, 1903

Ամենածեր մարդիկն անգամ չեն յիշեր այսպիսի երկրաշարժ մը. իր ցնցումներն ահռելի և նոյնիսկ սարսափելի են եղեր մանաւանդ Մանազկերտի բերդի կողմերը և նրա շրջականները։ Ընդհանրական զոյց մը կայ այդ առիթով հայերի և քրդերի մէջ, իբր թէ նախախնամութեան տնօրէնութիւնն է դա։

Երկրաշարժէն քանի մը շաբաթ առաջ բերդի և շրջակայ քանի մը վարչութիւններու և քիւրդ ազգաբնակութեանց մէջ որոշում մը կը կայանայ, որով կ'ուզեն հայկական քանի մը գաւառներ սրի անցնել։ Այս որոշումի գործադրութեանը համար Մանազկերտի մէջ իրենց բոլոր ներկայացուցիչներով ժողով մը կը գումարեն, որին կը հակառակի միայն բերդեցի խալիֆ մը, բարեխիղճ ու ազնիւ անձնաւորութիւն մը։ Սակայն իսլամ ժողովրդեան մոլեռանդութիւնը կը լռեցնէ անոր, և նոյն գիշերը բոլորն ալ կըսկսին պատրաստուիլ իրենց վայրենի նպատակը գործադրելու։ Ցոյցի էն առաջին վայրկեաններուն իսկ՝ կըսկսի գետնի ահագնադղորդ ցնցումը, որմէ կը վնասուին 1258 Թիւրք։ Բերդի փլատակները տեսնողը կը զարմանար, թէ ինչպէս խորտակուեցան այնքան հիանալի և նորաշէն ճամիներն ու այնքան հրյակապ շէնքերը։ Ամէն ինչ գետնին հաւասարուեցաւ։ Ամէն ինչ փլաւ հիմնայատակ կերպով։ Զարմանալի՛ բան. քրդերէն միայն բերդեցի խալիֆին շէնքն է, որ չէ վտանգուեր։ Զեն վտանգուեր նաև շատ հայերի բնակարաններ։

Մուշի առաջնորդական փոխանորդը պաշտօնական նոր տեղեկութիւններ կուտայ պատրիարքարանին՝ թէ Մանազկերտի և Պուլանըգի իսլամներու և հայերու կորուստը 3,000-3,500 եղած է և թէ միայն Մանազկերտի գաւառակին մէջ զոհերու թիւը 2,375 հոգի եղած է։ Մանազկերտ աւանին մէջ մեռած են ու վնասուած 198 հայ՝ տղամարդ և կին, նաև 900 տաւար։ Իսկ երկրաշարժէն զոհուած ընդհանուր հայերի թիւն է 733 երկսեռ, ամէն հասակէ։ Քարուքանդ եղած են 430 տուներ, կորած են 412 գոմէշ, 2,104 եզ ու կով, 2,218 ոչխար և 60 ձի ու աւանակ։

Նկատելու արժանի է սակայն, որ ամէն տեղեր հայ տարրի վնասը աւելի քիչ է։ Կարծես Նախախնամութիւնը հեքրել ուզած էր Թիւրքերու և քիւրդերու այն սխալ կարծիքը, որ անոնք ունին հայ տարրին վրայ։ Թիւրք և քիւրդ տարրերը կոտորածի նշանաւոր թեւականէն իվեր կ'ըսեն՝ թէ հայ ազգը կենդանի և հոգևոր չէ։ Իրենց մոլեռանդներու ազդեցութեամբ կ'աւելցնեն նաև, թէ հայերը Աստուած չունին և եթէ Աստուած զանոնք ճանչնար, անշուշտ կոտորածին ատեն զանոնք պիտի խնայեր և զերենք պիտի պատժեր։ Եւ այսպէս համոզուած ըլլալով՝ անոնք ամէն տեսակ անգթութիւններ կ'ընէին հայերուն նկատմամբ։

Սակայն բնութեան այս ծանր պատահարի հետևանքները քիչ մը մեղմացուցին բռնութիւնները, քիչ մը կասկածի ենթարկեցին հայոց թշնամիներուն այն խորին հաւատը, իբր թէ հայը Աստուած չունի և թէ իբր Աստծուն հաճելի է անոնց կոտորածը։

Թիւրք կառավարութիւնը հայերուն անցուդարձը արգիլելու համար՝ բոլոր հայ գիւղերուն վրայ, իրենց բնակիչներու թիւին համեմատ, 2-10 խօլճիներ է կարգած, գիշեր ու ցերեկ անդադար հսկելու նպատակով։ Մինչդեռ ինք կը կեղծէ, թէ քիւրդերու յարձակումներուն դիմադրելու համար են այս բոլորը, սակայն տներ կը կողոպտուին, գոմէշ, մատակ, եզ, կով և ամէն տեսակ անասունք կը յափշտակուին, և ոչինչ դիմադրութիւն չ'ըլլար պահապաններու կողմէն։

ՆԱՄԱԿ ՉՄՇԿԱԾԱԳԷՆ

23 մայիս, 1903

Սա փոքրիկ գաւառակը, որ դրսի հաղորդակցութենէ գրեթէ զուրկ է, թշուառութեանց և խժդժութեանց տեսարան մը կը ներկայացնէ։

Զմշկածագ ունի երեք տեսակ կառավարութիւն՝ քիւրդ, թիւրք և դաւաճան հայեր։

Աւելորդ է ըսել, թէ ամբողջ գաւառը, գիւղ և քաղաք, հարստահարութեանց տակ ընկճուած՝ հոգեվարքի վիճակ մը ունի. կարծես բոպէ առ բոպէ իրենց շունչը աւանդող հիւանդի վիճակը կը ներկայացնէ։

Քաղաքէս 2 ժամ հեռու Հաղթուկ գիւղը կայ, որ դէպքի ժամանակ քիւրդերու պաշտպանութեան շնորհիւ՝ թալնուելու տարաբախտութիւնը չունեցաւ. անկից ի վեր կառավարութեան քաղաքականութիւնը եղած է փճացնել այդ գիւղը։ Վերջերս շրջակայ քիւրդ և թիւրք ցեղեր ոտնձգութիւն կ'ընեն, խեղճ գիւղացոց արտերը և անտառը կը գրաւեն, որ իրենց միակ առօրեայ ապրուստի միջոցն է, քան զի այդ գիւղացիք սոսկ փայտի գնով կ'ապրին։ Իզուր կը բողոքեն կառավարութեան։ Արդէն կառավարութիւնը կալուածագրեր տուած է գրաւողներուն և անոնք օրինաւոր տէրեր եղած են։ Այս արարքը հիմնուած է այն պարագային վրայ, որով դէպքէն իվեր հայերը կարողացած չեն տէր ելնելու իրենց գէթ անշարժ կալուածներուն։ Կառավարութեան սովալլուկ պաշտօնեաները, այս առիթէն օգուտ քաղելով, տէր ելնող աւազակներէն խոշոր պատառներ կըլլան և այնպիսի կալուածագրեր տուած են, որ բոլոր հիները կ'ոչնչացնէ։

Վերջերս Խօճալաբացի քիւրդերը՝ Խոջանցի աշիրէթին վրայ քալելով՝ նախիրները կը քշեն և գիշերը բռնութեամբ Հաղթուկ հայաբնակ գիւղը կ'իջևանեն։ Ասոր վրայ խարբայցիները կառավարութեան կը գանգատին, իբր թէ Հաղթուկցիք քշած ըլլային նախիրը։ Կառավարութիւնը Հաղթուկցիները Խոզատի բանտի մութ ու խոնաւ ծակերի մէջ դնելով՝ կը չարչարէ (անցեալ տարիներ այս բանտին մէջ բաւական միատանցիներ մեռան, չկրնալով տոկալ) իբր գողոնաթաքոյցներ, ու բնաւ միտք չունի արձակելու զիրենք, թէև որպէս դրամ շորթելու մի-

ջոց, մինչև հիմա 100 ոսկիէն աւելի է արդէն առած իրենցմէ։ Արիւն-արցունքով խլուած դրամները իզուր թիւրք պաշտօնեաներու գրպանները կը պարարտացնեն և իրենց յետին ունեցածն իսկ վաշխառուին կ'անցնին իբր գրաւ։ Կառավարութիւնը որոշած է 50 զօրք պահել հազիւ 25 տուն ունեցող Հաղթուկի մէջ. իւրաքանչիւր տուն՝ 2 զօրք։ Երևակայեցէք խեղճերու ընտանեկան վիճակը. ի՞նչ քստմնելի արարքներ կը կատարուին երկնքի տակ։ Ասկէ առաջ Տէքքէ ըսուած գիւղէն աղջիկ մը առևանգած են զօրքերը։ Գիւղացիներուն յետին դրամը ծախսուելէ ետքը, անոնց անթիւ բողոքներուն այսպէս կը պատասխանէ կառավարութիւնը. „Քանի որ կը գանգատէք թէ դրացիները՝ քիւրդ կամ թիւրք՝ ձեզ կը չարչարեն, ուրեմն ինչո՞ւ յօժար չէք ձեզ պաշտպանելու համար գիւղին մէջ պահել զօրքեր (՞՞)։ Հաշիւնուդ չի գար, այնպէս չէ՞, կեա՛ւուրներ. բայց կառավարութիւնը ձեզ այլևս ձեր գլխուն չի պիտի ձգէ ու թ ո փ ո ւ զ ն ալ անպակաս պիտի ընէ ձեր գլխէն“։

Այս է գրեթէ բոլոր գիւղերուն վիճակն ալ, թերևս ասկէ աւելի սոսկալի։ Խիստ երկար կը լինի թառափ թուել։ Բլուր և Մախմէացի գիւղերուն մէջ հայերու արտերը դարձեալ գրաւեցին, ինչպէս նաև Ամէմեան ընտանիքի տասնեակ արտերը։ Բողոքներ շատ, արդիւնք՝ զէրօ։

Քաղաքին մէջ խեղճ խանութպանները ստիպուած են կամ ձրի տալ, կամ փակել խանութը, եթէ չեն ուզեր աւելի ծանր փորձանք մը։ Տուներու դռները միշտ փակ պահել ստիպուած են, վասն զի թուրքանի սովալուկ գայլերը բաց դուռ գտածնուն պէս ներս կը մտնեն ու աղջիկ, կին լակէլէ և զարդեր ըխլելէ ետք՝ կը հեռանան։ Ոչ պակաս կը նեղուի նաև մահմետական ժողովրդի հասարակ դասը, քան զի մեծ տարբերութիւն մը չէն դներ ասոնց և հայերուն մէջ։

Այս բոլորի հետ ունինք նաև դաւաճաններ։ Մեր սև բախտէն հայ ջոջեր են ասոնք. վա՜յ այն մարդուն, որ ասոնց ծուռ աչքով կը նայէ։ Գառնուկի զգեստը միշտ իրենց վրայ է։ Այդ գայլերը կ'երևնան իբր կեղծիքը ատող, անկեղծութեան և բարութեան տիպարներ։ Ասոնք կառավարական պաշտօնեաներու կաշառքի բանալիներն են, ու մեր թոյլ առաջնորդը, սիրաշահելու պարուակին տակ, ասոնց ձեռք խաղալիկ մ'եղած է, հակառակ ատոնց պաշտօնապէս (իրմէ առաջ) վատեր ճանչցուած ըլլալուն։ Զմշկածագի մէջ ազգային ամէն գործ ասոնց ձեռքին է, և առանց ասոնց ոչինչ կրնայ շարժիլ։ Ա ղ ա ջ ա ն պատուելին ատոնց էն կատարեալ պետն ու գլուխն է. խորամանկ՝ օձէն աւելի ու երևոյթով միամիտ՝ աղաւնիէն աւելի. մէկ գրչով հազար ու մի ստորագրութիւն կը կեղծէ. կը գրէ ի դիմաց տնտեսական, քաղաքական ևն ևն խորհրդոց, թէև ասոնք գոյութիւն չունին ու կը խաբէ կառավարութեան հայ պաշտօնատունը՝ պատրիարքարան, ուր փալասի պէս նստած է Մաղաքիան, լաւ կերպով փակած ականջները, ոևէ անախորժ բան չլսելու համար։

Կ. Պոլսէն եկած նպաստները միշտ այս Աղաջան պատուելի գազանի ձեռքը կը հասնի և անիկա լաւ կերպով, նպաստընկալ վարժարաններու տեղ, իր քսակը կը պարարտացնէ — 50% յաւելումով ցորեն կամ զանազան ապրանք կը հրամցնէ բուն նպաստընկալներուն, որոնք ստիպուած են լռել հացէ չզրկուելու համար։ Ոչ ոք կը համարձակի բողոքել։

ՆԱՄԱԿ ՏԱՃԿԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՑ

15 ապրիլ 1903

Համիդիէների մէջ անսովոր շարժում կայ։ Պատրաստուում են։ Այս ինչ կամ այն ինչ ալային (գունդ) պիտի գնայ, ասում են, բայց թէ ո՞ւր և ինչո՞ւ համար — որոշ ոչինչ չգիտենք։ Որոշել են, որ երբ լեռներից ձիւները վերանան, անպատճառ գնան դէպի պարսկական սահմանները ու խռովութիւններ հանեն։ Որպէս պատրուակ՝ բերում են, թէ „պարսիկ խաները անպատուել են մեր ցեղակիցներին“։ Իրողութիւնը այն է, որ զինուում են և սկսել են շուլուղներ սարքել Տաճկաբայազէդի սահմանների մօտերքը։ Առիթ տուողը Մակուի ներկայ դատաւոր Սարդարն է, որ կողոպտել է յայտնի քիւրդ ցեղապետներից մէկի տունը։ Քիւրդերը ուզում են անպատճառ վրէժխնդիր լինել և որոշել են ոչ մի միջոց չխնայել. . . Հաւանական է, որ տաճկա-պարսկական սահմանագլուխներում մեծ բարդութիւններ յառաջ գան, եթէ պարսիկ կառավարութիւնը միջոցներ ձեռք չ'առնէ։ Այդ խռովութիւններ ձեռնտու են տաճիկներին և նրանք քաջալերում են խռովարարներին։

Երկրի ներսից շարունակ յուսահատ ճիչեր են լսում. կոտորածի սարսափը նորից տարածուել է ամէնքի վրայ։ Մօտ օրերս Բիթլիզում էլի իրարանցում է եղել. տեղացի քրիստոնեաները սարսափահար թողել են առևտրի հրապարակն ու փախել. . . Թէ ի՞նչ հետևանք է ունեցել կամ ի՞նչ է եղել,—դեռ ևս լուր չկայ, միայն թէ այժմ ամբողջ քաղաքը պաշարուած է և ել ու մուտքը բոլորովին դադրած։

Նոյն սարսափն է տիրում և Վանի մէջ։ Իսլամ տարրը օրից օր աւելի թթու երես է ցոյց տալիս։ Մի ամերիկացի միսիոնար-ճանապարհորդ պատմում է, որ Վանը թէև կոտորածներից յետոյ „խաղաղ“ է եղել, բայց և այնպէս ժողովուրդը ոչ մի վայրկեան հանգիստ չէ ունեցել—շարունակ նեղուել ու տանջուել է հարկերի պատճառով։ Բացի այդ, տաճիկների բռնութիւնները քրիստոնեաների վերաբերմամբ բնաւ չեն պակասել։ Հայերի նիւթական վիճակը հետզհետէ ընկնում է, նրանք աւելի ու աւելի են թշուառանում։ Գաւառների մասին պատմելն անգամ աւելորդ է. թէ ո՞ր աստիճանի զրկանք ու նեղութիւն են քաշում դրանք—յայտնի է. քաղաքացին քաղաքում օր ու արև չի տեսնում, — ո՞ւր մնաց գիւղացին։ Եւ հէնց այսօր էլ թիւրքերը առիթ են որոնում՝ նոր-նոր կոտորածներ առաջ բերելու. . .

Մի խումբ տաճիկ պաշտօնեաներ սկսել են չափչփել տաճկա-պարսկական սահմանագլուխը. մի քանի օր է, որ անցել են Խոյ և Սալմաստ։ Դրանք թուով 30 հոգի կը լինեն—Վանի կուսակալի եղբայրն, մի քանի զինուորական սպաներ, փոլիս բոմիսէրներ ու զինուորներ են։ Դրանք Խոյում ու Սալմաստում, դէս ու դէն, հարց ու փորձեր են արել, թէ որտեղ են գաղթականները, որքանն են ընտանիքով, որքանն՝ առանց ընտանիքի։ Լրտեսների այդ ստուար խումբը ուզեց Արաքսից էլ էն կողմն անցնել, դէպի Կովկաս, բայց չյաջողուեց. թոյլտուութիւն չստացան։ Մաքսային մի կարգ խնդիրներ կարգադրելու պարուակով ու գաղթականներին թոյլտուութիւն ու անցագիր տալու անունով՝ դրանք եկել են իմանալու՝ ինչ կայ, ինչ չկայ։ Յայտարարում են ի գիտութիւն հայ գաղթականների, թէ „որոնք որ կասկածելի չեն, թող նախապէս

մի երաշխաւոր տան երկրի ներսում և մի անցագիր էլ առնեն ու գնան, — ճանապարհը բաց է"։ Ահա այս է եկող պաշտօնեաների կոչն ու հրաւէրը։ Բայց թէ ինչ սատանայական նպատակ ունեն, իրենք գիտեն միայն։ Պարզ բան է, որ դրանց համար ամէն մի գաղթական կասկածելի է. միայն ցանկանում են հասկանալ, թէ որտեղ են գաղթականները, որպէս զի որ ոևէ կերպով երկիր ուղարկեն կամ տեղական կառավարութիւնների ձեռքը մատնեն։ Տաճիկները ուզում են նորը անել երկրից դուրս, ինչ որ անում են երկրի ներսը։

—

Վերջերս մեռաւ Ծերունի Մարշիմոնը, որ երկար տարիներ սրով ու աւետարանով պաշտպանում էր իր քաջարի լեռնական ժողովուրդին։ Այսօր լեռնցի ջուլամերկցիները իրարանցումի մէջ են. 500-ի չափ պատգամաւորներ սպառազինուած՝ թաղել են Ծերունի Մարշիմոնին և այժմ ընտրում են նորին։

Հանգուցեալ Մարշիմոնը յաջորդ և ժառանգ չունի. տեղացիները աչքի առաջ ունին միայն նրա եղբօր Համաշա Իշայի որդի Բենեամինը, որ մի յաղթանդամ, խելք ու զարգացած երիտասարդ է. 17 տարեկան հասակից սովորել է անգլիացիների մօտ։ Այսօր ջուլամերկցիները մեծ ուրախութեամբ են ընդունում իրենց նոր երիտասարդ Մարշիմոնին, Բենեամինին, ինչպէս իրենց հոգևոր պետ, իրենց մեծ. կառավարող։ Թաղեցին հին գաղափարների տէր Ծերունուն և նրա տեղ ընտրեցին նոր գաղափարներ ուսած երիտասարդին, որին անձնուիրութեամբ կ՝աջակցէ իր քոյր Սուրմէնը, որ մեծ ժողովրդականութիւն է վայելում։

Որքա՜ն փոխուած են նոյնիսկ ասօրական բարքերը,— մի երիտասարդ դառնում է մի ամբողջ ժողովրդի հոգևոր գլուխ, իսկ մի օրիորդ—նրա մխիթարող պաշտպանն ու խորհրդակիցը։

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Լ. ԲԱԳՈՒ

13/30 յուլիս, 1903

Ապրիլ ամսին մեզ մօտ տեղի ունեցած ցոյցերից յետոյ՝ կեանքը քաղաքում, ըստ երևոյթին, ընդունեց իր սովորական ընթացքը։ Բաց ինչպէս չէ կարելի մի լեռնային սրընթաց հոսանքի առաջն իսկոյն առնել, այնպէս էլ, իհարկէ, անկարելի է հեշտութեամբ կանգնեցնել իշխող կարգերում արմատ ունեցող ոևէ հասարակական շարժում։

Եւ ահա հէնց այն ժամանակ, երբ ամէն բան մեզ մօտ հանգիստ էր թւում և ոչ ոք ոչինչ չէր նախատեսնում, քաղաքում յանկարծ լուր տարածուեց, թէ նաւթագործարանների շրջանում (Սև և Սպիտակ քաղաքներ) գործաւորները յուզւում են՝ կամենալով համերաշխութիւն արտայայտել Թիֆլիզում երկու օր առաջ սկսուած բանւորական գործադուլին։

Դա յուլիսի 4-ի երեկոյեան էր։ Յուլիսի 5-ին լուրը արդարացաւ. Սև և Սպիտակ քաղաքների գործաւորներ և արհեստաւորները դադարեցրին իրենց բոլոր աշխատանքները, և ամենակարճ ժամանակում գործադուլը ստացաւ ահռելի ծաւալ։ Գործարանական շրջանին իսկոյն արձագանք տուին նաւթահանքերի շրջանները (Բալախանի ու Բիբի-Էյբաթ) և քաղաքի ձիաքարշի բոլոր ծառայողները։ Հետևեալ օրը գործադուլին միացան երկաթուղու բանւորները, իսկ յուլիսի 7-ին, երկուշաբթի, թողին իրենց գործը հարիւրաւոր նաւերի նաւաստիները, տպարաններում աշխատող գրաշարներ և գործաւորները (3 օր մենք լրագիր չունեցանք) ու մեխանիկական գործարաններում և արհեստանոցներում աշխատող բոլոր բանւորները։ Վերջապէս էլէքտրական կայարանները և բազմաթիւ հացթուխներ, կօշկակարներ և դերձակներ անգամ անմաս չմնացին գործադուլում։ Մի խօսքով՝ 2 օրւայ ընթացքում զանազան արդիւնաբերութիւններում զբաղուած 40,000-ի չափ բանւորներ, ինչպէս մի հատիկ մարդ, ոտի կանգնեցին՝ բարձրաձայն պահանջներ դնելով իրենց վիճակը բարելաւելու մասին։

Որքան մենք ծանօթ ենք խնդրին, համարձակ կարող ենք ասել, որ Բագուի ներկայ գործադուլի նման շատ քիչ օրինակներ կարելի է գտնել գործադուլների տարեգրութիւնների մէջ գրաւելով արդիւնաբերութեան մի շարք ճիւղեր՝ այս գործադուլը կանգնեցրել է միաժամանակ նաև ուրիշ կարգի գործեր, որոնք անհրաժեշտօրէն կապուած են առաջինների հետ, և բացի դրանից՝ հանդէս է բերել համերաշխաբար միացած ամենատարբեր ազգութիւններ — ռուսներ, թիւրքեր, հայեր, ֆարսեր, վրացիներ, գերմանացիներ, հրէաներ, լեզգիներ և այլն։

Փաստի տպաւորութիւնը մեծ է, իրարանցումը՝ չափազանց։ Նահանգական ամբողջ վարչութիւնը իր ոստիկաններով, ժանդարմներով և տեղական զօրքերով, ինչպէս նաև բոլոր գործարանատէրեր և հանքատէրերը, մատնուած են մի զգացմունքի միայն—երկիւղի զգացմունքին. շանթահարուած երևակայութեամբ բոլորն էլ դողում են, թէ մի գուցէ 40,000 հոգուց բաղկացած բանւորական ահռելի բանակը դիմէ անկարգութիւնների—սպանութիւնների, թալանի կամ հրդեհաձգութեան։ Եւ ահա նահանգապետը հեռագրով մեծ զօրք է պահանջում, իսկ նաւթագործները դիմում են կառավարչապետին՝ խնդրելով փութացնել զօրքերի առաքումը։

Դրա հետ միասին գործադուլի երկրորդ-երրորդ օրից սկսած, ամենախոշոր ֆիրմաներից և նաւթագործների մշտական օրգան՝ այսպէս կոչւող „Նաւթագործների ժողովների Խորհուրդի" անդամներից, կազմուեց մի մասնաժողով, որը քննում էր՝ թէ ինչ դիրք պէտք է բռնեն գործարանատէրերը այս չտեսնուած գործադուլի հանդէպ։ Մասնաժողովը, ծանօթանալով բանւորների յայտարարած պահանջներին, ամբողջ 3 օրւայ պարապմունքներից յետոյ՝ եկաւ վերջիվերջոյ այն եզրակացութեան, որ նա իրաւունք չունի ոևէ վերջնական որոշում ընդունելու բոլոր գործարանատէրերի կողմից և սկզբունքով մերժելով բանւորների հետ անմիջական բանակցութիւններ սկսելու առաջարկը, մշակեց մի յայտարարութիւն ու դրա վաւերացման համար յուլիսի 10-ին հրաւիրեց ընդհանուր ժողով բոլոր հանքատէրերերից և գործարանատէրերից։ Այս ժողովում նախ կարդացուեցին բանւորների 30 կէտերում ամփոփուած պահանջները, որոնք վերաբերում են նրանց աշխատանքի և կեանքի պայմանները բարելաւելու, ինչպէս նաև օրավարձը բարձրացնելու ու 8 ժամւայ աշխատանք ընդունելու խնդիրներին։ Դրանից յետոյ ժողովին առաջարկուեց վաւերացնել մասնաժողովի մշակած յայտարարութիւնը, որ պէտք է կախ տային բոլոր գործարաններում և հանքերում ի գիտութիւն բանւորների և ի պատասխան նրանց պահանջների։

Ահա այդ յայտարարութիւնը.

«1) Բոլոր ծառայողներ, արհեստաւորներ եւ բանւորները, որոնք կը գան ծառայութեան մինչեւ երկուշաբթի ամսոյ 14-ի առաւօտեան 6 ժամը, կը հաշուեն առաջուայ պէս ծառայութեան մէջ.

«2) Բոլոր ծառայողներ, արհեստաւորներ եւ բանւորները, որոնք չեն գալ գործի մինչեւ յիշեալ ժամանակը, համարուում են արձակուած յուլիսի 5-ից եւ հրաւիրուում են ներկայանալ իրենց հաշիւները ստանալու համար.

«3) Բոլոր ծառայողներ, արհեստաւորներ եւ բանւորները, որոնք յիշեալ ժամանակին կը ներկայանան ծառայութեան, կարող են իրենց կարիքները պարզել ֆիրմաների վարչութեան առաջ. այդ կարիքները պէտք է քննութեան առնուին եւ ըստ կարելւոյն գոհացուին»։

Ժողովականներից շատերը պնդում էին, թէ՝ փոխանակ այդ ոչինչ չխոստացող, տարտամ յայտարարութիւնով հանդէս գալու, հարկաւոր է անմիջապէս բանւորների ներկայացուցիչների հետ բանակցութիւններ սկսել և աշխատել ուէ դրական համաձայնութեան գալ։ Առաջ եկան տաք վիճաբանութիւններ և իվերջոյ հարցը քւէարկութեան ենթարկուեց։ Ժողովը ձայների մեծամասնութեամբ — 44 ձայնով ընդդէմ 25 ձայնի — վճռեց.

«Բանւորների հետ բանակցութիւնների մտնելու առաջարկը մերժել եւ մանաժողովի մշակած յայտարարութիւնը կախ տալ արհեստանոցներում ու գործարաններում թողնելով, որ իւրաքանչիւր գործարանատէր ինքը համաձայնութեան գայ իր գործաւորների հետ եւ անէ կարելի դիմումները»։

Այդպիսով գերակշռեց խոշոր կապիտալի ներկայացուցիչների ձայնը, որին հետևեցին նրանցից կախում ունեցող մանր և միջակ արդիւնաբերողները։ Բայց դուք, ոսկու արքաներ, իհարկէ, դեռ հեռու էք ձեր յաղթութիւնը տօնելու տրամադրութիւնից, քանի որ, նոյնիսկ կառավարութիւնը, որի վրայ դրել էք ձեր յոյսերը, ահա 9 օր է չէ համարձակւում ուէ տեղ երեալ բանւորներին...

Գործադուլը դեռ շարունակւում է։

II. ԹԻՖԼԻՍ

14 յուլիս

... Գրում եմ երկաթուղու կայարանից, շտապ։ Այստեղ բանւորական գործադուլները ահռելի կերպարանք են ստացել։

Խանութների գործակատարներին, որոնք տարան յաղթութիւնը, հետևեցին տպարանների գրաշարները, մանգործները ևն։ Ցուզմունք կար նաև ձիաքարշի ծառայողների մէջ ու այդ պատճառով իւրաքանչիւր վագոն վերջին օրերս երթևեկում էր սուիներով զինուած 4-5 զինուորների հսկողութեամբ, Ընայելով դրան՝ այսօր ձիաքարշն էլ կանգնեց։ Երկաթուղու բանւորներն ու ծառայողները նոյնպէս յայտարարել են գործադուլ։ Միքայէլեան և միւս փողոցներում վխտում են հետևակ և ձիաւոր զինուորական խմբեր։ Կայարանը, որտեղից գրում եմ նամակս, մի զինուորական բանակի է նմանում։

Միխայլովо կայարանում բանւորները կանգնեցրել են մի ապրանքատար գնացք և յետոյ, երբ փորձել էին կանգնեցնել նաև Բօրժոմից եկողմարդատար գնացքը, առաջ է եկել ընդհարում զօրքի հետ։ Բանւորներից սպանուել են զօրքի ձեռքով 10-ից աւելի և վիրաւորուել են մօտ 20 հոգի։

Բացի մասին ձեզ գրած կը լինեն. այնտեղ 6-7 օր է՝ իշխում է կատարեալ ժողովրդական կառավարութիւն։ Բալախանիի երկինքը մաքուր է, ինչպէս ամառանոցներում — ոչ մի կտոր ծուխ, ոչ մի կտոր մուխ... կատարեալ անգործունէութիւն և ժողովներ ժողովների յետևից՝ 3,000, 5,000 և վերջ՝ 10,000 ունկնդիրներով և բացարձակ, ազատ դաշտում։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՕՑԻԱԼԻԶՄԻ „ՊԱՏՈՒՀԱՍԸ“

—

„Էին Գերմա՛նիա, մենք գործում ենք քո դիապատանը, գործում ենք նրա մէջ երեք անգամ անէծք, գործում ենք, անդադար գործում“։

Փայլուն յաղթանակի հպարտ գիտակցութեամբ՝ գերմանական սօցիալ-դեմօկրատները կարող են կրկնել Հայնէի խօսքը։

Վերջին քաղաքական ընտրութիւնները Գերմանիայում շշմեցրել են ոչ միայն այդ երկրի պահպանողականներին, այլև ամբողջ համաշխարհային ռէակցիայի բանակը։ Հին, իւնկերական Գերմանիան սարսափահար յետ է նահանջում նոր, երիտասարդ Գերմանիայի յորձանքի առաջ... Կայսր և մինիստրներ, արքայականներ, կղերականներ և ուխտադրուժ ազատամիտներ, գլուխները կորցրած՝ հաւաք են կանչում և երգւում են միանալ ի մի կազմ, ներդաշնակ բանակ՝ սօցիալիստական ահռելի „պատուհասին“ դէմ դնելու համար։

Սակայն անցել են անդառնալի կերպով „բացառիկ օրէնքների“ և դրակոնական ճնշումների օրերը, — Սօցիալ-դեմօկրատիան այլևս արհամարհելի մի քանակութիւն չէ, ինչպէս դիտւում էր 1878-ին, այլ մի պետութիւն՝ բուրժուազական հիւծուող պետութեան մէջ... Եւ երբ Vorwärts-ը, սօցիալիզմի կենտրոնական օրգանը, բուռն ոգևորութեամբ բացականչում էր՝ „Գերմանիան Սօցիալ-դեմօկրատիայի թագաւորութիւնն է և Բերլինը՝ սօցիալիստների մայրաքաղաքը“, նա շատ էլ հեռու չէր իրականութիւնից։

Վերջին ընտրութիւններին՝ Սօցիալ-դեմօկրատիան գումարեց երեք միլիոն ձայն — մի թիւ, որ չունի ոչ մի ուրիշ կուսակցութիւն — և Ռայխստագ ուղարկեց 81 պատգամաւոր։ Հօհենցօլլերնեան մայրաքաղաք Բերլինի հինգ շրջանները սօցիալիզմը գրաւեց հէնց առաջին թափով, վեցերորդ շրջանը հազիւ հազ միայն կարողացաւ յետ նետաձել „ազատ մտածող“ (Freisinnige) կուսակցութիւնը։

Ամբողջ Սաքսօնեան, Գերմանիայի ամենաարդիւնաբերական վայրը, իր 23 ընտրողական շրջաններով անցաւ սօցիալիստների ձեռքը, բայց սօցիալիզմը „ճարակում“ է նաև գիւղերը. „կարմիր պատուհասը“ անդիմադրելի կերպով ողողում է աւատական ու կղերական տիրապետութեան կենտրոնները...

Ամբողջ երկրի մէջ գումարուած ձայների քանակով Սօցիալ-դեմօկրատիան մինչև օրս էլ ամենաուժեղն էր բոլոր կուսակցութիւններից — այժմ առաւել ևս՝ քանի որ սօցիալիստական ձայների թիւը աճել է վերջին հինգ տարւայ ընթացքում մի ամբողջ միլիոնով։ Ահաւասիկ գլխաւոր կուսակցութիւնների

գումարած ձայների պաշտօնական պատկերը, որ ներկայացնում է Reichboote.

Սօցիալիստներ	3. 025.103
Կաթոլիկ կենտրոն . . .	1. 853.707
Ազգային ազատամիտներ .	1. 243.393
Պահպանողականներ . .	909.714
Ազատ մտածողներ . . .	523.505

Ցաղթանակի մեծութիւնը երևում է այն հանգամանքից, որ բոլոր միւս կուսակցութիւնների ձայների թիւը ստիճանաբար նւազում է... Եւ եթէ գերմանական Լիբերալիզմը, գէթ յանձին իր արմատական ներկայացուցիչների, չգաւաճանէր իր պարզած դրօշին և վերընտրութիւնների ժամանակ իր ձայնը չտար պահպանողական տարրերին — Սօցիալ-դէմօկրատիան կը լինէր անպայման ամենաստւարը Ռայխստագի կուսակցութիւնների շարքում, աւելի ստւար, քան կղերական կենտրօնը. Սակայն հինգ տարւայ ընթացքում պատգամաւորների թւի բարձրանալը 58-ից մինչև 81 ինքնին պերճախօս մի իրողութիւն է և գրաւական Սօցիալ-դէմօկրատիայի անսովոր աճման։ Այսօր Գերմանիայում տաք վիճաբանութեան նիւթ է արդէն Ռայխստագի Բիւրօյում սօցիալիստ կուսակցութեանը աթոռ զիջելու հարցը, որ գրեթէ արհաւիրք է պատճառում Վիլհէլմ կայսրին...

Բուրժուազական կուսակցութիւնների պառակտման դիմաց՝ հաճելի է դիտել Սօցիալ-դէմօկրատիայի օրինակելի ներդաշնակութիւնը և կուսակցական հրաշալի դիսցիպլինը։ „Ուղղափառները“ և „Բերնշտայնեանները“, որոնք կատաղի կռիւ էին մղում թէօրիական հողի վրայ, ընտրողական պայքարի միջոցին միացել էին մի կուռ, հօմօժէն բանակի մէջ և ծածանեցրել կարմիր, յաղթական դրօշը...

Սօցիալիզմի սրարշաւ առաջադիմութիւնը մտածել է տալիս ոչ միայն հակառակորդներին, այլև բազմաթիւ համախոհներին, որոնք շատ էլ լաւատես չէին իրենց վարդապետութեան տարածման նկատմամբ։ Իրականութիւնը ցոյց է տալիս, որ վարդապետութիւնը մեծ նւաճումներ է անում և անկախ մարքսիզմի „ֆօրմուլաներից“։ Թէպէտ և արդիւնագործութեան ու դրամագլխի կենտրօնացումը տեղի չէ ունենում Մարքսի և Էնգելսի նախագծած չափերով, թէպէտ և խոշոր արդիւնաբերութեան կողքին, մանաւանդ դաշտերում, սունկի պէս բսնում են մանր արդիւնագործութեան այլևայլ ճիւղեր, թէպէտ և աստիճանական թշւառացման թէօրիան (Die Verelendungstheorie) անվիճելի իրողութիւն չէ, թէպէտ և ժամանակակից աշխատաւորի վիճակը ընդհանուր առմամբ բարձրանում է և ոչ վատթարանում,—այնուամենայնիւ սօցիալիզմի գաղափարը անսայթաք առաջ է գնում և զարմացնում է ամենալաւատեսներին անգամ։

Տարակոյս չկայ, որ տնտեսական գործօններից զատ՝ կան ուրիշ գործօններ ևս, մտաւոր, քաղաքական ևլն։ Գերմանական բիւրօկրատ պետութիւնը իր „մաքսային տարիֆներով“ ու անվերջ ճնշումներով արդէն պարարտ հող է՝ սօցիալիստական աշխարհայեացքի աճման համար։ Իսկ պրօպագանդը, գաղափարի անդուլ, անդադրում պրօպագանդը — մամուլի ու ժողովների միջոցով, գիտական, ժողովրդական բրօշիւրներով—ինքնըստինքեան մի հզօր գործօն է, որ միշտ աւելի և աւելի ստւարացնում է սօցիալիստական զօրքը։

* * *

Միջազգային ռամկավարականները, բոլոր նրանք, որոնց բաղձանքն է՝ տեսնել մի օր տիեզերական եղբայրութեան արշալոյսը ծագած հին աշխարհի փլատակների վրայ, ողջունում են անհուն բերկրանքով Սօցիալ-դէմօկրատիայի յաղթանակները, որոնք փութացնում են այդ պանծալի օրւայ գալուստը...

Իսկ մինչ այն՝ բաղձանք, որ ուժեղացած Սօցիալ-դէմօկրատիան, որը իր հայրենիքում միակ բողոքողն է ժողովուրդների հարստահարութեան և ամէն տեսակ բռնութիւնների դէմ, այսուհետև աւելի եռանդով, աւելի կորովի՝ աշխատէ գործ դնել իր ազդեցութիւնը Գերմանիայի արտաքին քաղաքականութեան վրայ, որի պաղ գրկում խեղդւում է ազատամտութեան ու մարդասիրութեան ամէն մի թռիչք։

ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԵՐՁԵՑՈՒՄԸ

—

Բոլոր լրագիրները մի առանձին շեշտով են արձանագրում Եւրօպական վեհապետների վերջին փոխադարձ այցելութիւնները, որոնք ապացոյց են շատերին ցանկալի մերձեցման երեք դէմօկրատ պետութիւնների միջև — Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի։ Հռոմում, Պարիզում և Լօնդօնում՝ փոխանակւած ցանկութիւններն ու ճառերը պարզաբանւում են ոչ իբրև դատարկ բառախաղեր, այլ իբրև գրաւական, որ նրանց հեղինակները ձգտում են — յանուն փոխադարձ շահերի և միջազգային խաղաղութեան — եթէ ոչ միանալ, դաշնակցել, գէթ հարթել երեք մեծ ազգերի միջև գոյութիւն ունեցող թիւրիմացութիւնները, գէթ սահմանել բարեկամական յարաբերութիւններ։

Եւրօպան չի ուզում վերածւած լինել երկու հսկայական թշնամի բանակների. երեքպետեան և երկպետեան դաշնակցութիւններից դուրս, նրանց իսկ անդամների մէջ, առաջ են գալիս նոր համաձայնութիւններ, որոնք բոլորն էլ մէկ գլխաւոր նշանաբան ունեն — համաշխարհային խաղաղութիւնը։ Մի կողմից Ռուսաստանի աշխարհակալական ձգտումները ծայրագոյն Արևելքում, միւս կողմից Գերմանիայի աստիճանաբար ուժեղանալը ծովի ու ցամաքի վրայ և մանաւանդ պանգերմանիզմի յայտնի արշաւանքը դէպի թիւրքական Արևելք, — այդ բոլորը լուրջ մտածել է տալիս միւս պետութիւններին, և ահա այդ վերջինները, երէկւայ անախորժ միջադէպերը մոռացութեան տալով, իրար մօտենալու փորձեր են անում։

Անգլիան, մանաւանդ Տրանսվալեան պատերազմից յետոյ, ստիպւած է խախտել Splandid isolation-ի, „վեհապանծ մեկուսացման“, վաղեմի դաւանանքը և նեցուկ փնտրել՝ իր համաշխարհային տիրապետութիւնը անխախտ պահելու համար։

Ֆրանսիան առանձին պատճառներ ունի ուրախանալու այդ նոր „համաձայնութիւնների“ առիթով։ Ռուսաստանի հետ բարեկամութիւնը չի տալիս ակնկալւած հետևանքները և, նիւթական զոհաբերութիւններ պատճառելով Ֆրանսիային, յաճախ նոյնիսկ վնասում է նրա արտաքին հեղինակութեանը... Ցայտնի է, որ հայկական խնդրի հողի վրայ է մանաւանդ, որ չարաչար տուժում է Ֆրանսիայի բարոյական հմայքը Արևելքում։ Չնայած ամբողջ երկրի բուռն հայկական համակրութիւններին, չնայած յաճախակի մեծադղորդ ցոյցերին, պաշտօնական

Ֆրանսիան, իր հայանպաստ տրամադրութիւններով հանդերձ, անզօր է գտնւում մի համարձակ քայլ անել հայոց ռէֆօրմները իրագործելու համար։

Այդ տխուր իրողութեան գիտակցութիւնը միշտ աւելի և աւելի է արմատանում ֆրանսիական ազգի լայն խաւերի մէջ, և վերջին տարիներս մի քանի անգամ պարլամենտում լսւեցին ձառեր՝ ոչնպաստաւոր „ալլիանս"ի համար։ Աւելին կ'ասենք. „Շատօ դ'Օ"ի փայլուն միտինգը, որին մասնակցում էր, կարելի է ասել, ամբողջ Ֆրանսիան իր ամենաականաւոր ներկայացուցիչներով, հանդիսանում էր որոշ չափով իբրև ցոյց, բողոք այն անտարբերութեան դէմ, որ Ռուսաստանը ցոյց է տալիս դէպի հայկական և մակեդոնական դատը։ Վերջապէս ինքը Դելկասէն, հայոց հարցում բռնած համեմատաբար գովելի դիրքով և Մակեդոնիայի համար ներկայացրած ռէֆօրմների լուրջ նախագծով, հասկացրեց մի քանի անգամ ու բացորոշ կերպով, որ Ֆրանսիան բնաւ տրամադիր չէ հետևել Հանոտօյի ռենեգատ քաղաքականութեան և զոհաբերել իր բարի համբաւը, իր պանծալի աւանդութիւնները՝ ռուս քաղաքականութեան։ Այդ անկախ, համակրելի ընթացքի արժէքն իմանալու համար, հարկաւոր է միայն յիշել „Նօվոյէ Վրէմիայի" անսովոր, զայրագին ոճը, որով ցարիզմի մշտական այդ պաշտպանը երեք ամիս առաջ դատափետում էր Ֆրանսիայի մինիստրին և քաղաքական գործիչներին, այն պատճառով, որ սրանք ուզում են արևելեան խնդրում գործել հակառակ Ռուսաստանի կամքին։

* * *

Իր ժամանակին մենք արձանագրեցինք ֆրանս-իտալական բարեկամութեան վերահաստատումը, որ աւելի ևս պիտի շեշտւի Վիկտոր Էմանուէլի առաջիկայ այցելութեամբ՝ նախագահ Լուբէին։ Արևմտեան երեք դէմոկրատ ազգերի մերձեցումը դրական մի հանգամանք է դիտւում նոյնիսկ սոցիալիստական բանակում։

Երբ Պարիզը հանդէսներ էր կատարում Էդուարդ VII-ի այցելութեան առթիւ, Լօնդօնի թերթերը — նոյնիսկ ջինգոյական, շովինիստ ոգով տոգորուածները — խանդավառութեամբ ողջունում էին անգլո-ֆրանսիական բարեկամութիւնը և ջերմապէս հրաւիրում նախագահ Լուբէին՝ այցելել Լօնդօն։ Այսօր այդ այցելութիւնը կատարուած է արդէն։ Լուբէին ընդունեցին Լօնդօնում անսահման ոգևորութեամբ, որպիսին, ասում՝ են, Ֆրանսիայի նախագահը չէ գտել մինչև իսկ Պետերբուրգում... Դարձեալ ձառեր ու կենացներ, լի փոխադարձ համակրութեան հաւաստիքներով, դարձեալ երկար ու ձիգ կաբինետային խօսակցութիւններ՝ երկու երկրների արտաքին քաղաքականութեան պատասխանատու մինիստրների միջև, — խօսակցութիւններ, որոնք, անշուշտ, պտտւում էին միջազգային կարևորագոյն խնդիրների շուրջը։

Հեռագիրը մի քանի անգամ լուր բերեց — և լաւատեսները շտապեցին հաւատալ — որ Դելկասէ և Լանսդօվն երկար խորհրդակցել են և այն մասին՝ թէ ինչպէս առաջ բերել համաձայնութիւն նաև Անգլիայի ու Ռուսաստանի միջև՝ արևելեան որոշ խնդիրներին գոհացուցիչ լուծում տալու նպատակով... Ֆրանսիան իբր թէ պիտի լինի միջնորդ՝ այդ դժւարին համաձայնութիւնը գլուխ բերելու համար։ Անգլո-ռուսական հաշտութեան գաղափարը տենդով արծարծւում է անգլիական մամուլի որոշ օրգաններում այն օրից, երբ գերմանական համաշխարհային տիրապետութեան վտանգը սկսեց ալեկոծել Մեծ Բրիտանիային։

Այդ նոր ու օրիգինալ „համաձայնութեան" նախագիծը շատ կնճիռներ ունի, իհարկէ, բայց և այնպէս շատերին անիրագործելի չէ թւում։ Դեռ գուցէ շատ ուրիշ անակնկալներ է պատրաստում քաղաքական էվոլիւսիոնը... Առայժմ ուշադրութեան արժանի ենք համարում մերձեցումի վերջին քայլերը՝ արևմտեան երեք պետութիւնների միջև, քանի որ այդ մերձեցումը չէ կարող չ'անդրադառնալ արևելեան ստրուկ ազգերի ճակատագրի վրայ։

ԹԵՐԹՕՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ԱՐՏՐ.

Հայդուկային խումբը Մոգաց գիւղերում և լեռներում երկար թափառելուց յետոյ՝ կանգ առաւ մի սահանքաւոր, սրընթաց գետակի առաջ։ Խոր ձորի կողերը կրծելով՝ պղտոր ալիքները՝ լեռնակատարներից գահավիժող նժոյգների պէս փրփուրէ բաշերը ցցած՝ գլորւում էին իրար վրայ և խլացուցիչ որոտով մահ էին սպառնում անխոհեմ անցորդին, որ սիրտ կ'անէր նրանց մէջ նետւել։

Անցնելը դժւար էր. հուն չէր երևում։ Խմբապետն անհանգիստ էր, իսկ առաջնորդը գլուխը կորցրած՝ վհատութեամբ նայում էր աջ ու ձախ և, երևում էր, չէր համարձակւում առաջ անցնել, պատասխանատուութիւն յանձն առնել։

— Յետո՞յ... կոչեց խմբապետը կէս անհանգիստ, կէս զայրացած եղանակով, նայելով մտազբաղ, շւարած առաջնորդին, որի վարանոտ, վհատւած շարժումներին նա վաղուց էր հետևում։

— Գետը փրփրուն է ու կատաղի, խմբապե՛տ, — պատասխանեց առաջնորդը շփոթւած։

— Բայց և այնպէս պէտք է անցնել, շեշտեց խմբապետը սրտնեղած։

— Պէտք է անցնել... Հա՛, իհարկէ... բայց այս անիծած գետը գիշերւայ անձրևից վարարել է, և էլ հունը չեմ գտնում։

— Չես գտնո՛ւմ... Լսո՞ւմ էք ընկերներ, դարձաւ խմբապետը դէպի միւսները, որոնք լուռ հետևում էին այդ խօսակցութեանը. մեր խելացի առաջնորդը, որ այնքան խոստումներ էր անում մեզ, այժմ հունը կորցրել է, խելքն էլ հետը. ուրիշ խօսքով՝ եթէ մենք այժմ յարձակման ենթարկւենք և հարկ լինի խոյս տալ, փրկութիւն չկայ, առաջնորդը հունը կորցրել է։ Մի՞թէ այս դժբախտ երկրում գետերն էլ մեզ թշնամի են և չկայ մէկը, որ մեզ օգնի։

— Ես կը յո՞գրնեմ։

Ամէնքը մէկէն յետ նայեցին դէպի խօսողը։ Դա մի բարձրահասակ, լայնաթիկունք ծերունի էր, թաւ, անմշակ միրուքով, որ սկսւում էր հմարեա աչքերի տակից և իջնելով՝ ամբողջապէս ծածկում էր նրա առնացի կուրծքը։ Թաւամազ ու խոժոռ դէմքի վրայ իշխում էր մեծ, արծւային քիթը, որ վերից վար կորանում էր վեհօրէն

և կախուում նրա ալեխառն ու հարուստ բեխերի վրայ։ Աչքերի տեղ, թաւ յօնքերի և միրուքի մէջ կորած՝ երևում էին երկու մթին խոռոչներ և նրանց խորքում՝ երկու պլպլան կէտեր, ինչպէս մութ ձորում փայլող երկուք մոռացած ճրագներ, որոնց ցոլքերը սակայն այլևս անզօր էին այդ ծեր դէմքի մռայլը ցրելը։

Իր հրացանի տակ մի փոքր կռացած՝ հուժկու ծերունին առաջ շարժուեց, կանգնեց խմբապետի հանդէպ և մազոտ ձեռքը նրա ուսին դրեց.

— Մի՛ ըռբքի, իմ խէր, մեռնիմ էդա մօրուսիդ, ասաց նա, էսա խոքիս զըմմէնուդ խօքու ուղուրին թորդ մատաղ էղնի։ Մոգաց գետեր ու սէլափներ, թէ զըմմէն լէ վիշապ դառնան, „Ընկերութեան“ մարդ չեն ուտեր. ձեր ոտ խէրով ի, ձեր ոտաց մեռնիմ։ Հէ՛, էնա Կապուտուոր վերէն կ'իրիշկա, գէլ ու գազան, քիւրդ, շուն, թիւրք՝ զըմմէն լէ էսա գետով կէրթան, կուգան. մկայ էսօր „Ընկերութեան“ մարդ բաղա տի էրթա՞յ... Քէլէ՛ք, ձեր ոտաց մեռնիմ, ձեր ոտ խէրով ի, քէլէ՛ք, Կապուտուոր կը յօգընի։

Ծերունին ասաց ու առաջ անցաւ գետի հոսանքն իվեր, իսկ խումբը հետևեց նրան։

Հայդուկային խմբի մէջ այս անօրինակ ծերունին մի խորհրդաւոր անձնաւորութիւն էր։ Ո՞ր գիւղացի էր և ի՞նչն էր ստիպել նրան իր կեանքի վերջալուսին այս արիւնոտ, արկածալից կեանքը յանձն առնել, այդ ոչ ոք չգիտէր։ Նրա մազոտ կրծքի, նրա կնճռոտ, միշտ մռայլ ճակատի տակ անշուշտ մի ծանր գաղտնիք կար, որ ծածուկ էր աշխարհից։ Ծերունին լռակեաց էր, քիչ էր խօսում, շատ մտածում, բարի էր, հնազանդ և հաճոյակատար։

Վաղուց չէր, որ նա յայտնուեց հայդուկների մէջ։ Փեսանդաշտից վեր մի լերան վրայ խումբը մի օր հանգստանում էր, երբ պահապանը նկատեց մի ծերունի, որ լեռնիվեր էր գալիս։ Նրան չ'արգելեցին. նա մենակ էր ու անզէն։ Երևի շատ էր քայլել, յոգնած էր երևում և յենուում էր իր ահագին մահակի վրայ։

Հասաւ հանգստացող հայդուկներին, իր բոլոր հասակով կանգնեց նրանց առաջ, գլխարկը հանեց, ճասկատից քրտինքը սրբեց և լայն կրծքով շունչ առաւ։ Լեռնային հովը մեղմիւ խաղում էր նրա հարուստ միրուքի հետ և մերթընդմերթ բաց էր անում նրա տակ թագնուած մազոտ, արևից սևացած կուրծքը։ Ծերունին մի պահ նայեց զինուած հայդուկներին, ապա ձեռքերը երկինք տարածեց՝ բացականչելով.

— Փառք քէ, Կա՛պուտուոր, խայ լէ ասպապ, սիլահ ունի, արնի խոտ մեր քթին լէ զարկաւ։ Ձեր ճոչ ո՞րն ի, ձէ մատաղ։

Նրան ցոյց տուին խմբապետը։ Ծերունին առաջացաւ, բռնեց նրա ձեռքը, ուզում էր համբուրել, բայց խմբապետն արգելեց այդ և նրան նստեցրեց իր կողքին։

— Կը տեսնա՞ս էսա չոլեր, սարեր, ձորեր, ասաց ծերունին ձեռքը մեկնելով դէպի Փեսանդաշտի հարթութիւնն ու լեռները, էնա լէն, դուրան տեղեր, էնա քար ու քոլի տակ գէլ ու գազան տեղ ունին, էսա գլխուս էլ տեղ չկայ. արուն եկաւ դուռս բռնեց, ինչ կար չկար թաբլի թափի, ընկայ չոլեր...

Նրա ձայնը խզուեց, նա հեկեկաց և ծեր աչքերի խորքից արցունքի կաթիլները, ժայռերի տակից բղխող աղբիւրի պէս, դուրս թափուեցին և իջան միրուքի վրայ։ Նա կոշտացած ձեռքով սրբեց մազոտ այտերը և շարունակեց.

— Ձեր ոտաց տեղ ընձի ճամբախ, ձեր նստած տեղ ընձի օթևան, թորգէ՛ք ձի լէ էսա գլուխս „Ընկերութեան“ մատաղ էնեմ։

Նա բռնեց խմբապետի ձեռքը երկու ձեռքով և արտասուակալած աչքերը նրա շրթունքներին յառած՝ սպասում էր։ Միևնոյն ժամանակ խմբապետն ուշադրութեամբ նայում էր նրա դէմքին, կարծես, նրա սրտի գաղտնիքը կարդալու համար։ Այս վշտացած, այս տանջուած ծերունին մի յուսահատ էր անշուշտ, մի շիտակ, վիրաւոր հոգի, որ իր երկրում իշխող անարդարութեան հանդէպ ըմբոստ, հին օրերից մնացած կորովի մի ազնիւ մնացորդով նեռուում էր դէպի լեռները, ձեռք էր մեկնում նրանց, որոնք արդարութեան և ազատութեան յաղթանակի համար էին մարտնչում։ Այդ պարզ ու վեհ արտաքինի մէջ ոչինչ չկար, որ նոյնիսկ ամենափոքր անվստահութիւն ներշնչէր։ Ի՞նչ պէտք էր փորփրել այդ ծեր կեանքը, դուրս քաշել նրա գաղտնիքները և փռել աշխարհի առաջ. իւրաքանչիւր ցաւած սիրտ, իւրաքանչիւր վշտացած հոգի իր նուիրական, ծածուկ անկիւնն ունի հպարտութեան քօղով պատած, որը մերկացնել դժուար է առանց արիւնոտ վէրքը նորից ցաւեցնելու։

Դժբախտ երկրի ամէն մի կորած անկիւնում, ամէն մի գիւղում, խրճիթում այնքան անծանօթ, աշխարհին անյայտ ցաւեր կան, վրէժի ծարաւ այնքան հոգիներ... Այս ծերունին մէկն էր այդ հազարներից։ Խմբապետը հասկացաւ և այդքանը բաւական էր. նա ջերմութեամբ սեղմեց իրեն մեկնուած ձեռքը։

Ծերունին հայդուկ էր։

Այնուհետև խմբի քարոզչական ճանապարհորդութեան ընթացքում, երբ այս կամ այն հայ գիւղում խմբապետը հաւաքում էր գիւղացիներին, խօսում էր Սուրբ-Գործից, ինքնապաշտպանութիւնից, երկրի վրայ ծանրացող սարսափելի բռնութիւնից, ծերունին մի կողմ քաշուած ծխում էր անընդհատ և, առանց գլուխը վեր բարձրացնելու չիբուխից, ասում էր բարձրաձայն.

— Յօգընէ՛ք, յօգընէ՛ք էսա գործին, Կապուտուոր գինայ, էնիկ անուշ կը զուրցի, էսա խէրով բան ի, յօգընէ՛ք, յօգընէ՛ք էսա գործին։

Ծերունու այդ մի քանի խօսքը տեղացիների համար պերճախօս էին ու համոզիչ. ծանօթ շեշտ էր, հասկանալի հնչիւն, որ լսում էր այն ծխի ավի միջից, ինչպէս մի երկնային պատգամ, և գրաւում, յուզում էր շատերին։

Զահիլ ընկերները ծերունուն „Յօգընէք“ անունով կնքեցին։ Նա կարծես գոհ էր դրանով և թախծալից ժպիտը խաղում էր նրա դէմքին ամէն անգամ, երբ նրան կանչում էին „Յօգընէք ամի“։

Ահա այս խորհրդաւոր ծերունին էր, այս „Յօգընէք ամին“, որ յանձն առաւ խմբին գետից անցկացնել և այժմ առաջ էր գնում, բայց առանց հունը փնտրելու, կարծես նա կանխաւ գիտէր, թէ ո՞ւր էր գնում և դիմում էր դէպի որոշեալ տեղ։

Նրա քայլուածքը սակայն, սկզբում խաղաղ ու հաստատ, կամաց կամաց դառնում էր տենդոտ, անհանգիստ։ Քանի առաջ էին գնում, ծերունին աւելի և աւելի յուզմունքի նշաններ էր ցոյց տալիս, ինչպէս մի զգաստ, փորձուած ձի, որ ճանապարհից ոչ-հեռու գտնուող վտանգն է զգում և փնչացնում անհանգստութեամբ։ Նա փոխանակ գետին նայելու, աչք չէր հեռացնում շրջակայքից, ցանուած

արտերից, դաշտերից, ճանապարհներից: Անմիջապէս յետևից քայլողները լսում էին Նրա խոր հառաչանքը, Նրա խուլ մրմռոցը և ակամայ Նայում էին իրար առանց բան հասկանալու ծերունու անհանգստութիւնից և առանց Նրան հարց տալու: Նրա խորհրդաւորութիւնն ու տարիքը միշտ ճնշել էին ամէնքին, այժմ էլ ինչպէս կախարդուածներ հետևում էին ծերունուն դէպի մութ անյայտը:

Նրանց առաջ բացւեց մի ցորենի արտ, դեղնած, հասնելու մօտ, որ տարածւում էր գետի երկարութեամբ և բարակ, ոսկեգոյն շերտով խաղում էր ալիքների հետ: Ծերունին մի վայրկեան կանգ առաւ, Նայեց արտին, մի բան մրմռաց ինքն իրեն, ձեռքը թօթւեց և հաստատ քայլերով մտաւ ցորենների մէջ, որոնք ցաւագին խշշոցով ճկւեցին Նրա ոտների տակ:

— Մի՞թէ ուրիշ ճանապարհ չկայ, ծերունի, ասաց խմբապետը՝ ափսոսելով այդ գեղեցիկ արտը:

— Քէլէ՛ք, ձեր ոտաց մեռնիմ, եղաւ պատասխանը:

Ծերունին՝ մինչև մէջքը թաղւած արտի մէջ՝ քայլում էր առանց յետ Նայելու և իր լայն քայլերով աւերած առաջ բերում: Եւ խումբը Նրա յետևից տրորելով, փշրելով հասկերը՝ առաջ էր գնում: Տեսարանը ցաւալի էր, արտը ոչնչանում էր: Ամէնքն շտապում էին գոնէ շուտով դուրս գալ, որպէսզի Նուազ յանցանք գործած լինեն, սակայն իզուր. ծերունին հազիւ արտի վերջին հասած՝ կանգ առաւ, շուրջը Նայեց և ճանապարհը թեքելով, սկսեց արտի լայնութեամբ քայլել դէպի գետի հակառակ կողմը:

— Ո՞ւր այսպէս, ծերունի, հարցրեց խմբապետը կանգ առնելով: Ծերունին պատասխանեց, թէ առաջները վիհ կայ, անհրաժեշտ է պտոյտ գործել: Արտի մէջ բացւեց մի երկրորդ ճանապարհ, նոյնքան լայն, նոյնքան աւերիչ, որքան առաջինը: Քիչ յետոյ խումբը կրկին փոխեց ուղին, այս անգամ դէպի մի ուրիշ կողմ, բայց միշտ արտի միջով, որովհետև ծերունին գտաւ, թէ սխալւել է և եթէ այսպէս շարունակելու լինեն, կը դուրս գան քիւրդ գիւղի հանդէպ: Այնուհետև դեռ երկար ժամանակ ծերունին զանազան պատրւակներով ման էր ածում քսան հոգուց բաղկացած խումբը միևնոյն արտի մէջ, և հայդուկների ոտների տակ տրորւում, ոչնչանում էին այնքան յոյսեր, այնքան աշխատանք:

Խմբապետը վրդովւած էր այս բարբարոսութիւնից, միւսները քայլում էին ակներև դժգոհութեամբ, մրմռալով, բայց ծերունու փոյթը չէր. Նա շարունակում էր աւերածի անողորմ գործը և ասես ուխտել էր այս արտի մէջ մի հատ կանգուն հասկ չթողնել:

Թշնամութիւն չէ՞ արդեօք, ակամայ մտածեց խմբապետը. գուցէ այս անիծած ծերունին վրէժ է լուծում մէկից և հայդուկները մի անարդար գործի անգիտակից գործիքներ են: Նրա հրամանով խումբը կանգ առաւ խուրի պէս տափակցած, տրո՛րւած արտի մէջ: Խմբապետը պատրաստւում էր խիստ հարց ու փորձի ենթարկել այս անողորմ առաջնորդին, երբ ծերունին իր կանգնած տեղում զոյգ ձեռքով աչքերը ծածկեց ու ճչաց սարսափելի ձայնով.

— Կուռնա՛ք աչեր, կուռնա՛ք...

Եւ կանգնած տեղում մի վայրկեան Նրա ալեզարդ գլուխը երերաց, լայն թիկունքն և ուսերը ցնցւեցին խորը հեծեծանքներից ու բոլոր հասակով Նա փռւեց արտի մէջ: Ընկերները չորս կողմից վրայ վազեցին, շրջապատեցին Նրան և շւարած կանգ առան: Ծերունին սարսափելի էր, կարծես խելագարւում էր: Նա կրծքի վրայ սողում, տրորւում էր հասկերի մէջ, չանգռում էր փշրւած ցօղունները, մռնչում, հեկեկում էր ցաւից ու ձեռքով ցոյց էր տալիս կանգուն մնացած մի քանի փունջ հասկեր, որոնք ցցւել էին վեր լի հատիկներով, ամենից բարձր, ամենից սիրուն:

— Տրորէ՛ք, էս էլ տրորէ՛ք, ձեր ոտաց մեռնիմ, շան ու գէլու թորգ փայ չեղնի: Տղէկս, վա՜խ, ջահիլ ջիւան տղամարդ, էսա տեղ զարկին արնախում չներ. ախպօրս էնա տեղ փարալամիշ էրին: Հաո՛ւ, արնի մէջ ընկած ցորեն իրիշկէք էման պանցր ի... հօ՞րի էսլայ պանցր ի, ձէ մեռնիմ.. խաբա՞ր տի տանի Կապուտուրին... Ձէ՞ Կապուտուր գըլմէն տեսաւ... Է՜հ, էն էլ է խռով էլաւ վըր մեր գլխուն: Իրիշկէք էսա՛ տեղ, ախպրտի՛ք, սմբուլներ ի՛նչ խօրոտ-մօրոտ ին... Վա՜խ, արո՛ւն են ծծեր, արո՛ւն են խմեր, տղեկիս, ախպօրս արո՛ւնը... Հէ՜յ, Կապուտուր Տէ՛ր, մէջ արնի բուսած ցորեն դու իմա՞լ ղաբուլ էրիր... Դէ որ էսլայի, ա՛ռ, թորգ էս էլ քեզի էղնի...

Եւ ծերունին թափով ոտքի ելաւ, կատաղաբար ընկաւ բարձր հասկերի վրայ, դողդողալով ձեռքով փետեց փունջ-փունջ և թափով շպրտեց դէպի երկինք: Հասկերը ցրիւ եկան և տարածւեցին տրորւած արտի մէջ: Հայդուկները շւարած Նայում էին այս յուզիչ տեսարանին, վշտից խելագարութեան հասած այս ծերունուն, որ միրուքը խճճւած ու այլանդակ, աչքերն արցունքով լի ու կատաղի, տրորում, փետում էր ցորենները և փունջ-փունջ ցրւում էր երկնքի երեսին, որպէս մի գերագոյն Նւէր իր Աստծուն, որ մարդկային արեան մէջ ցորեն էր բուսցրել: Ոչ ոք չէր մօտենում Նրան, ոչ ոք չէր խօսում. տեսարանի վեհութեան առաջ ամէնքը քարացել էին:

— Դէ՛, հըմկայ քէլէ՛ք, ձեր ոտաց մեռնիմ, դարձաւ ծերունին հայդուկներին՝ աւերածի գործը աւարտելուց յետոյ, դէ՛, հըմկայ քէլէ՛ք: Էն Կապուտուր Տէր, որ վերէն կ'իրիշկայ, արնով ջրած արտ ղաբուլ կէնի. քէլէ՛ք էրթանք, մենք էլ ցանենք էնոր ուզած: Ցանե՛նք, ցանե՛նք. շատ արտ ունինք ցանելու...

Ասաց ու Նետւեց դէպի գետը, թափով մտաւ ալիքների մէջ մինչև գօտին և հրացանը գլխից բարձր սպառնալից կերպով երկնքին ուղղած՝ Նա պատռում էր թափով փրփրուն ալիքները, կարծես անմիջապէս միւս ափում թշնամու հետ զարնւելու համար, ուր իր ցանկացած արտը պիտի ցանէր հինն աւերելուց յետոյ:

— Յօգընի՛, յօգընի՛, Կապուտուր Տէ՛ր, մռնչում էր Նա ալիքների մէջ, և դա աղօթք չէր, այլ մի պահանջ, մի հրաման:

— Արտ ունինք ցանելու, քո ուզած արտ, յօգընի՛, կ'ըսեմ, յօգընի՛...

Եւ հայդուկները լողում էին Նրա յետևից...

Ալիքները կատաղի էին, ալիքները փրփրուն, բայց մօտ էր ափը...

Մօտ էր փրկութիւնը...

ՂԱՐԻԲ

ԿԱԽԱՂԱՆ

Վերջին պահուն լուր առանք, որ Երզնկայի մէջ՝ Թիւրք կառավարութեան ձեռքով կ ա խ ա ղ ա ն բարձրացուեցաւ հանրածանօթ ընկեր

ՔԵՌԻՆ,

որ կը կրէր նաև Ռ ո ւ բ է ն անունը։

Ծանր կորուստ մ'է այս։ „Դրօշակ"ի յաջորդ համարներէն մէկուն մէջ պիտի զետեղենք Դերսիմի հերոսի կենսագրութիւնը՝ պատկերով հանդերձ։

Աղեքսանդրիայէն կը հաղորդեն մեզի, որ ապրիլ 27-ին վախճանուեր է մեր ընկեր

ԱՒԵՏԻՍ ՄԱՂԱԲԵԱՆ

Հանգուցեալը Կ. Պոլսոյ ամենահին գործիչներէն էր և կարևոր դեր խաղցած է ռումբերու պատրաստութեան և պանքայի ցոյցին նախապատրաստական գործերուն մէջ։

Յարգա՜նք թանկագին ընկերոջ։

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

Խաչիկ Օվ.-ից 10 ֆրանք, Աբրահամ Ծաւ.-ից (Պիրէ — Յունաստան) 6 ֆր., Դորպատի ուսանողներից (Ն.-ի միջոցաւ) 79. 50 ֆր., Միւնխէնի ուսանողներից (Խ.-ի միջոցաւ) 25, Ալէքսանդրիայի նախկին (1899-1902) կոմիտէից (Գալֆ-ի միջոցով) 130 ֆր. 95 ս., Բրիշվատերից (Ամերիկայ) „Դրօշակ"ի համար 50 ֆր. (նիւթատուներն են՝ Յ. Ա. 2, Յ. Ս. 2, Ք. Պ. 1, Յ. Տ. 1, Ա. Ս. 1. 50, Յ. Ս. 1. 50, Գ. Մ. 1), Դավոսից՝ Տուրքան Սանատորիայից 25 ֆր., Յարութիւն Փորթուգ-ից (Կոուզալթա) 20 ֆրանք։ Գումար 346 ֆր. 45 սանտիմ։

ՊԱԼԿԱՆԵԱՆ կեդր. Կոմիտէն՝

Փիլիպէէն՝ խումբերէ՝ „Հեթում-Գազիկ" 26 լէվ, „Վրէժ" 90, Արամեան 33. 10, Արեւելեան 18, Արեւելեան 20, Հեթում-Գազիկ 22, օրիորդաց Կ. Խաչ 122. 50, Հայուհեաց „Շաբէ" ընկ. 357 լէվ։

Նէրներ՝ Փանոսէն 8 լէվ, Պ. Ծէներից 3 նաբոլէոն, Կ. Թոշնիկից 2, Կ. Գիսակ 15, Հայկակ 20 լէվ։

Սօֆիայէն՝ Սերոբ-աղբիւր խմբ. 60 լէվ, Փէդայի 21, Թաթուլ 16, Թաթուլ 45, Անդրանիկ 6, Սերոբ-Աղբիւր 75, Անդրանիկ 22 լէվ։

Պուրկազէն՝ Մասնաճիւղէն 100 լէվ, „Դրօշակ" ստացողներէ 65, Մասնաճիւղէն 100, Մասնաճիւղէն 100, Օժանդակ խմբ. 56 լէվ։

Ռուսճուքէն՝ ի նպաստ հայ բանտարկեալներու 81 լէվ։

ԾԱՆՕԹ.—Նախորդ անգամուն Ռուսճուքէն ստացւած 200 լէվի 100 լէվը Սամսվիտինն է։

Սուլինայէն՝ Ենթակոմիտէ 440 ֆրանք, Գայաճքէն՝ Անծնուրաց խումբ 20 լէվ, Սլիվէնէն՝ Մասնաճիւղէն 210. 15 ֆրանք, Կանանց „Արաքս" ընկ. 75 լէվ, Պօրիսովկրատէն՝ զանձանակի հասոյթ 174 լէվ, Սքոպելօվէն՝ զանձանակի հասոյթ 8 լէվ, Գարաքունարէն՝ Սերոբ խումբ 37 լէվ, Պետո խումբ 35 լէվ։

Փիլիպէէն՝ „Բուլղարացի Պետո" եւ „Աբէլ-Թաթուլ" խմբերից (Արեւմտ. Բ.-ի միջոցով) 125 եւ 50 ֆրանք։

Ընդհանուր գումար 1830 լէվ 60 ս. եւ 885 ֆր. 15 սանտիմ։

ՈՍԿԵՀԱՆՔԻ Կոմիտէն՝

Որուտում խումբ 508. 75 դահեկան, Վազգէն 66, Արմաւիր 31. 50, Խիզախ 31, Սարհատ խումբ 66, Լինաձոր I. 165, Միր Կարօ 178, Ժամացոյց 12. 25, Կայծակ 14։ Գումար 1072 դահ. 50 փր։

ԱՄԵՐԻԿԱՅԻ կեդր. Կոմիտէն՝

ՓՐԱՆՍԼԻՆԻ Կոմիտէին ձեռամբ 1902 թ.

Ա. Ս. 25 դոլար, Յ. Գ. 25, Պ. Գ. 25, Կ. Թ. 20, Ս. Ե. 20, Յ. Կ. 10, Ա. Տ., Կ. Ս., Կ. Գ., Ս. Ա., Խ. Թ., Գ. Կ., Մ. Ա., Պ. Մ., Ոմն 5-ական, Վ. Տ. 3. 50, Օ. Կ., Յ. Մ., Հ. Փ., Պ. Կ., Ոմն 2-ական, Ոմն 1. 50, օր. Ռ., Յ. Պ., Ե. Ե. եւ 4 անծինք 1-ական։ Գումար 192 դոլար։

ՎԱՇԹԻՆՍՎԻԼԻ Կոմիտէին ձեռամբ 1902 թ.

Ա. Տ. 50 դոլար, Կ. Տ. Թ. 41, Կ. Տ. Թ. 41, Կ. Ս. 25, Մ. Գ. 20, Պ. Մ. 16, Յ. Մ. 15, Մ. Տ. Թ. 10, Ե. Մ., Շ. Բ., Պ. Մ., Ե. Մ., տիկ. Ս. 5-ական, Կ. Մ. 3, Մ. Մ. 3, Գ. Տ. 2, Յ. Մ. 2, Մ. Ս. 1։ Անդամական մուտքերէ, նուէրներէ եւ ժողովներու պսակներէ 37. 82 դոլ.։ Գումար 250 դոլ. 82 սէնթ։

ՓԻՋՊՈՒՐԳԻ Կոմիտէին ձեռամբ 1902 թ.

Մ. Ճ. 25. 25 դոլար, Ս. Ա., Բ. Թ., Մ. Կ., Մ. Մ. 16-ական, Ս. Գ. 15, Ա. Գ. 11, Պ. Տ. 10, Ս. Մ. 6, Մ. Խ. 6, Մ. Հ., օր. Ճ., Տ. Փ., Գ. Պ. 2-ական, Մ. Թ. 1, Ե. Ե. 1։ Անցեալ տարւայ հաշուէն 1. 67, տոմսակներէ շահուած 1։ Գումար 149 դոլ. 92 սէնթ։

ՀԷՅՎՐՀԵԼԻ Կոմիտէին ձեռամբ 1902.

Ս. Յ. 50 դոլար, Յ. Խ. 38. 50, Ս. Պ. 37. 10, Յ. Լ. 30, Մ. Մ. 10, Յ. Ե. 10, Ա. Գ. 6, Ա. Թ., Մ. Թ., Ա. Լ. 5-ական, Ն. Ս., Ն. Մ., Ոմն 2-ական, Պ. Յ. Մ. 1. 50, Ա. Ա., Մ. Մ. Ա. Խ. Յոյն մը, Լօրէնսցի մը, Գ. Մ., Մ. Տ. եւ 5 անծինք 1-ական։ Գումար 216 դոլար 10 սէնթ։

ՈՒԷՍԹ ՓՈՒԼՄԸՆԻ Կոմիտէին ձեռամբ 1902 թ.

Մ. Դ. 40 դոլար, Գ. Մ. 20, Ս. Յ. 18, Հ. Մ., Գ. Մ., Ս. Հ., Մ. Զ., Պ. Գ., Վ. Մ., Հ. Մ., Մ. Յ. 10-ական, Ս. Պ. 7, Ա. Ա. 6, Ս. Յ., Խ. Ս., Ս. Ե., Ն. Թ., Մ. Գ., Յ. Դ., Մ. Գ., Գ. Մ., Մ. Յ., Ա. Ա., Յ. Մ., Ոմն, Յ. Հ., Ս. Տ. 5-ական, տիկ. Կ. Յ., Գ. Տ. Յ., Յ. Դ. 2-ական, Տ. Զ., տիկ. Գ., Ս. Ե., Մ. Յ. 1-ական։ Ամսավճարներէ 30, պնակէ 6։ Գումար 285 դոլար։

ՆԻԿՊՈՒՐԸՆԻ Կոմիտէին ձեռամբ 1902 թ.

Կուազան 25 դոլար, Սմբատ 15, Շուհամէր 10, Կայծ, Վիշապ, Տ. Տ. 5-ական, Յ. Մ. 1. պնակներէ 2. 33։ Գումար 68 դոլար 33 սէնթ։

ԹՐՕՅԻ Կոմիտէին ձեռամբ.

Սանիվ, Վարդան, Հարւած 5-ական դոլար, Վազգէն 3, Ա. 3, Մկո 1, ամսավճարներէ 12. 50։ Գումար 34 դոլ. 50 սէնթ։

ՇԻՔԱԿՕԻ Կոմիտէին ձեռամբ.

Հնազանդ 52 դոլար, Մ. Արի 10, Վ. Մ., Վէզիր, Ս. Յ., Մ. Զ., Գ. Ք., Քրիսթօ 5-ական, Բազրատունի 5. 75, Յ. Ք., Ժիրայր, Պարթեւ 3-ական, Տ. Ս., Յ. Մ., Ե. Ա., Ոմն 2-ական, Մակեդոնացի մը, Պ. Ա., Յ. Ն., տիկ. Ե. Գ. 1-ական, պնակներէ 7. 35, արեւայլ աղբիւրներէ 6. 90 դոլար։ Գումար 133 դոլ. 50 սէնթ։

ԳԱՀԻՐԷԻ Կոմիտէն՝

1899 թւէն մինչեւ 1902 օգոստոս 15. — Զարմայր 15 դահեկան, օր. Սիր. 5, օր. Վերգինէ 20, տիկ. Քրիստինէ 10, տիկ. Էֆտիկ 20, տիկ. Մարիամ 10, պրն. 12538՝ 10, Վահագն 30, պրն. 12540՝ 10, Ռ. Կարապետ 48, Պարոյր 10, Պ. Ակոբճան 5, Մ. Պողոսեան 5, Վարդգէս 40, Վարպետ 15, Վարդան 5, Յ. Մարտիրոսեան 10, Մ. Փէշտմալճեան 20, Մ. Մարգպանեան 20, Ա. Քալճեան 5, Սուտանցի 40, Մենտոր 30, Մասիս 30, Փայլակ 40, Ժիածան 90, Շապուհ 5, Արշակ 5, Շահէն 20, Աշոտ 120, Արեւելքցի 45, Հ. 10, Հայկ 20, Երկաթ 10, Բարեսէր 5, Կայծակ 5, Այր 5, Հայկ Նահապետ 20, Կ. Գ-եան 10, Ճլվլիկ 20, Ճարտարապետ 25, Արամազդ 105, Ճարտար 25, Ոխակալ 10, Ա. Բէն 100, Գ. Գալֆայեան 10, Կայծակ Վրէժ 10, Գ. Նազարօղլու 60, Արուսեակ խմբ. 29, Ոմն 39, Արամ 50, Մ. Միսաքեան, Թիւ 20, Ծնունդ, Ե. Հրանտ, պրն. Ա., Մինրան, Ն. Վ., Օ. Տ. Ա., Յարութիւն 10-նակաեն, Նաթանեան, Կարապետ Էրքիկ., Վաղինակ, Պորա, Ճիվան, Մ. Խաչերեան, Մելքոն, Մ. Մերքեզեան, Ը. Մկրտիչեան, Ծորակ, Թիւ 45, Ոմն, պրն. Տ., Հ., Շամլը, Հովիտ, Մխիթար, Խաչիկ, Մկրտիչ, Վ. Թաթոս, Արմէն, Ապարանջան, Ցակոբ 5-ական։ Գումար 1511 դահեկան։

Խմբագրութեան դիմել հետեւեալ հասցէով՝
Rédaction du „Droschak", Genève (Suisse)